

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.	Օրագիր եւ Լրագրութիւն.....	Մ. ՆՈՐԻԿԵԱՆ
ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ.	Վիթոր Նիւնո.....	ՏՈՔԹ. ՈՊԵՆՍՈՆ
ԱՌՈՂՋԱԲԱՆԱԿԱՆ.	Յոռի սովորութիւններ.....	ՍԱԹԵՆԻԿ Գ. ՀԱՐԵՆՅ
ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ.	1882ի Գիտաւորն (ԷՕԺԵՆ Ա. ՇԵՎԱԼԻԷ) Թարգմ.	ՀԱՅՐ
ԳՐԱԿԱՆ.	Կին արուեստագէտներն ի Միւնիխ.....	Մ. ՆԱԹԱՆԵԱՆ
ՋԱՆԱԶԱՆՔ.	Ի մահ ոստում մը Պրուքլինի կամուրջէն.....	Մ. ՉՈՊԱՆԵԱՆ
ՏԵՂԱԳՐԱԿԱՆ.	Հանապարհորդական նկատողութիւնք.....	
ՔԱՂՈՒՄԻ ՇԱԲ. ԼՐՈՑ	Արտաքին, Ներքին, Ազգային.....	
ՍԻՄՕՆԷ ԵՒ ՄԱՐԻ.	Կղապիւն տը Մոնթէրէն) Թարգմ.....	

ՊԱՅՄԱՆՔ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ.....	տարեկան.....	Կէս ոսկի Օսման.
».....	վեցամսեայ.....	Քառ » »
Գաւառներ.....	տարեկան.....	Կէս » »
Օտար քաղաքներ.....	».....	12 Ֆրանք
Թղթատարութեան ծախք ».....	».....	15 դահ. արծաթ
Մէկ թերթին Գինն է.....	».....	60 փարայ

Մասիսի խմբագրութեան վերաբերեալ ո՛րեւէ գրութիւն կամ նամակ պէտք է ուղղել առ

Խմբագրութիւն Ստեփան Մասիս Լրագրաց
Ղալաթիա Ներսիսեանի կանոն

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԻՔ ԼՐԱԳՐՈՅ

1885

ՊԱՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՑ ՊՈՐՍԱ

Ղալաթիա, 31 Մայիս

ԸՆԹԱՅՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՅ

3 ամիս Լոնտրայի վրայ պանքայի	440	7/8
3 » » » (վճռկնկն)	440	1/2
3 » Բարիլի » (պանքայի)	22	82 1/2
» » » (վճռկնկն)	22	50

ԸՆԹԱՅՔ ԱՐԺԵԹՂՈՅ

Օսմանեան Գոնսոլիտե

Դահեկան

Երեկ երեկոյ քոյ	(Միաց. D. Սէշի	48	25
Պորային քոյուէն վերջը	»	48	22 1/2
Բերայի մէջ	»	—	—
Աւառտուն բացուեցաւ	»	48	23
Բարձրագոյն քին	»	48	24
Նուազագոյն »	»	48	23
Կէս օրին	»	48	23 1/2
Փոխառութիւն 1858)	A. Սէշի Գ. Կ. Ա. Ո.	33	20
» 1862)	»	»	»
» 1860)	»	»	»
» 1863)	B. »	»	49 30
» 1872)	»	»	»
» 1865)	»	»	»
» 1869)	C. »	»	48 24
» 1873)	»	»	»

Իւնիֆիէ Եգիպտական

Երեկ երեկոյն քոյուէն	74	15
Այս առտուն բացուեցաւ Գ. Կ.	74	20
Կէս օրին	74	20

ԲԱԺՆԵՏՈՒՄՔ

Սօրիէթէ ժէնէրալ	Գ. Կ. Անգլ. Լ. Բ.	3	48
Գրէտի ժէնէրալ	» » Օսմն. »	7	8
Պանք տը Գ. սնս	» » » »	4	30
Սոս. Նանժէ վալէօր	» » » »	3	30
Թրամուէյ	» » » »	28	5
Իռւմէիի երկաթուղի	Ֆր.	43	25
Օպլիկատիօն տը Բրիտիթէ	»	28	5
Բաժնեթուղթ Լաւրիօմի	»	60	

Ընթացք դրամոյ

Յամանեան ոսկի	զըշ.	100
Օ Ֆրանքոնց	»	87 30
Անգլիական ոսկի	»	440 20
Բօլ Իմբէրիալ	»	90 40
Քրիմից	»	54 42
Իռւմէիի թղթադրամ	»	8 88
» արծաթ	»	89 30
Ֆիօրին	»	9
Մէճ. արծ. (տարբ.)	»	408
Վէցնոց	»	403

Հինգնոց	»	403
Մէթալիք	»	98 30
Պղինձ	»	—
Թղթադրամ	»	—

ԵՐԻՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտոն, 11 Յունիս, ժամ 5 վայր. 15 երեկոյ

Անգլ. քոնսոլիտէ	99	3/8
Օսմն. » Սէշի Գ. բացուեցաւ	46	15 1/16
» » » քոյուէն	46	13 1/16
» » » Ա.	33	1 1/4
» » » Բ.	49	
» » » Գ.	46	7/8
Օթօման 1874	67	
Փոխառութիւն 1877	79	1 1/4
Պանք Օթօման	42	3/8
Ռուսական փոխառ. 1873	92	3/4
Եգիպտական միացեալ (Իւնիֆիէ)	64	1 1/4
» անանձն. (Բրիտիթէ)	85	3/8
Տայրա Սանիէ	61	1 1/2
Տօմանիալ (փոխառ. Իօչիլա)	83	1 1/2
Հունգարական պարտաթուղթ 40/0	—	
Փոխանակութիւն Բարիզի վրայ	—	

Վիեննա, 11 Յունիս, ժամ 4 երեկոյ

Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	424	60
Օսմանեան երկաթուղի	21	20

Բարիզ, 11 Յունիս, ժամ 3 վայր. 45 երեկոյ

Ֆրանսական Ռանթ 4 1/2 0/0	440	25
» » 3 0/0	82	42 1/2
Օսմանեան քոնսոլիտէ Սէշի Գ. բացուեցաւ	47	45
» » » քոյուէն	47	05
» » Սէշի Բ.	48	90
» » » Գ.	47	40
Օսմանեան երկաթուղի	43	25
» Իէժիի բաժնեթուղթ	—	
Պանք Օթօման	562	50
Գրէտի Լիօնէ	536	25
» Ֆիօնիէ	4362	50
Բաժնեատոմս Լիօնի	4252	50
Սուէզի ջրանցք	2140	
Ռուսական 5 0/0 1877 ի	99	3/4
Իտալական Ռանթ	96	90
Եգիպտական միացեալ	324	37 1/2
Սպանիական (արտաքին)	59	3/8
Բրիտիթէ Թիւրք.	390	
50/0 Հելլենական	337	50
2էք Լոնտրայի վրայ	25	24

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն. Ե. Ի. Գ. Ա. Ղ. Ա. Գ. Ա. Կ. Ա. Ն.

34 ԲԴ ՏԱՐԻ

1885 ՅՈՒՆԻՍ 1

ԹԻԻ 3772

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՇԱԲԱԹ 1 ՅՈՒՆԻՍ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՕՐԱԳԻՐ

ԵՒ

ԼՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա.

Ամէն մարդ «Օրագիր» ըսելով կը հասկընայ տպուած թերթ մը որոյ օրինակները հարիւրաւոր հաղարար կը տարածուին հասարակութեան մէջ եւ որ կը պարունակէ յօդուածներ, խմբագրական կամ թարգմանեալ, զանազան խնդիրներու եւ դէպքերու վրայ, ինչպէս քաղաքական, դիտական, գրական եւ։ Կան օրագիրներ որք հանապազօրեայ են, կան որ պարբերական։ Տեղական կամ գրքի ձեւով հրատարակուածները, ինչպէս դիտենք՝ կը կոչուին «Հանդէս» եւ ոմանք իրենց յատուկ ճիւղէն առնելով իրենց անունը՝ կը կոչուին գրական, դիտական, քաղաքական, տնտեսական եւ։ Կան դէս։

Ընդհանրապէս մեծ օրագիրներու մէջ, նիւթերու տպագրութեան կարգ մը, տեղ մը կ'որոշուի։ Թերթին ՎՅ մասը վարի կողմը լայն գծով մը զատուած՝ կը պահուի «Թերթօն»ներու, որոց նիւթն է թատրոն, արհեստ, քննադատութիւն, վէպեր եւ։ Իսկ լրագրոյն բուն իրանին վրայ այսինքն Ա. Բ. Գ. երեսները կը պարունակեն։ Յօդուած մը խմբագրական, յետոյ աւելի կամ նուազ եր-

կար հատուածներ, յետոյ արտաքին լրեր, ներքին լրեր, զանազան լուրեր։ յետոյ ժողովներու ատենագրութիւններ։ Եթէ կան՝ զատարաններու ատենագրութիւններ կամ գիտական ու դրական ատենախօսութեանց վրայ տեղեկութիւններ։ Երբեմն ալ այլ եւ այլ թեթեւ նիւթերու վրայ։ Վերջը վերջը կը դրուի որոշակի ընթացք, արժէթիւնը գին, թատերական խաղերու ծանուցում, եւ զանազան ազդեր։

Շատ լրագիրներ իրենց չորրորդ կամ վերջին երեսը աւագող ծանուցմանց եւ ազդերու կը պահեն։ Ոմանք առջիններն ալ, եւ եւ միայն ներսի երեսները յօդուածներ կը տեսնուին։ Ոմանք ամենէն առաջ հեռագրական լուրերը կը դնեն, կամ թէ ուրիշ կարգ մը կը սահմանեն իրենց նիւթերու բաժանման կամ զետեղման։

Հին ատենները, մեր ունեցածներուն նման օրագիրներ չկային։ առաջին անգամ անոնք կ'սկսին ԺԷ դարուն, իսկ անկէ յառաջ պատմութիւնը որոշ տեղեկութիւն չի տար։

Ի հարկէ ամէն ժամանակ, ամէն երկիր, կառավարութիւնը պէտք էին զգացած իրենց օրէնքները, դուցէ նաեւ քիչ մ'ալ իրենց դործերը ժողովրդեան ծանօթացունել։ Կ'ըսուի թէ տասնաբանեայ պատուիրանները Մովսէս վէմի վրայ գրած, Իսրայելացւոց աչքին առջեւ կը դնէր։ Բայց ինչ կ'ընէին ասիացի աշխարհակալները եւ Յոյնք, յայտնի չէ։ միայն Հռովմայեցւոց համար կը յիշատակուի մի պարբերական հրատարակութիւն, որն որ իւր ժամանակը պէտք է օրագրի նման բան մը եղած ըլլայ։

Աւագող դարեր, հանրապետական Հռովմ-

մայ ուրիշ պատմութիւն չունեցաւ բայց ի Տարեգրութիւններէն, Annales des Pontifs, կամ grandes-annales. Ասոնք հաւաքածոյք էին տարւոյ ընթացքին մէջ պատահած անցից, զորս ոչ-քրիստոնէ Հռովմայ քահանայապետ կամ քրմապետը գրել կուտար սպիտակ տախտակի մը վրայ եւ իւր տան մէջ կը դնէր ի տես ամենեցուն: Ասոնց յաջորդեցին acta populi et urbis ըստածները:

Երբ քաղաքական կեանքը զարգացաւ հռովմէական աշխարհակալութեան հետ՝ հըրատարակութեանց նոր եւ աւելի ազդու գործիքներու պէտքը շուտով գգալի եղաւ. եւ այն պահուն՝ երեւցան Acta Diurna-ները որք շատ նմանութիւն ունէին արդի օրագիրներուն հետ: Դոքա՝ Յուլիոս Կեսարէն սկսեալ՝ եղան հանապազօրեայ եւ կ'արձանադրէին նոյն իսկ ամենամանր դէպքեր: Բայց Acta Diurna-ի օրինակները քիչ էին եւ հետաքրքիրները շատ. ի՛նչ ընելու էր: Հարուստ գերիներ գնեցին որոց միայն զբաղմունքն էր օրինակել. շատ չանցաւ, անոր առեւտուրը ընող արհեստաւորներ երեւցան եւ Տակիտոս կը պատմէ թէ այդ օրաթերթը մինչեւ գաւառները եւ բանակները սկսան յղուիլ. Կեսարները երբ անկան, օրաթերթն ալ անհետացաւ:

* *

Միջին դարուն՝ օրագրի հետք չի տեսնուիր: Եթեւտառանքերորդի առաջին տարիները ինչեւեւ է, տպագրութեան գիւտէն 150 տարի վերջը, որպէս զի օրագրի նման բան մը գտնուի: Վենետիկոյ Հանրապետութիւնը խմբագրել կուտար Foglietti կամ Fogli d'avvisi անուամբ տեսակ մը համառօտ ծանուցագիրներ զորս Ծերակոյտը կը յղէր իւր դեսպաններուն: Բայց այս գրութեանները երբեք չեւեւցան հրապարակի վրայ. եւ այդպէս ըլլալ պէտք էր, նկատելով անոնց ուրոյն հանգամանքը եւ Վենետիկցոց քաղաքականութիւնը որոյ հիմնական վարդապետութիւնն էր՝ Լատին:

Հետաքրքիր եւ գաղափարաւոր մարդիկ հաճոյք մը կ'ըզան հոս ու հոն վազել եւ լուրեր հաւաքել: Այս սովորութիւնը այնքան յառաջ գնաց ատեն մը որ արհեստ մը դարձաւ եւ ի պաշտօնէ լրագրներ novel-listes, երեւցան: Գաղղիացի տոհմականները

ինչպէս Հռովմայեցի աւագանին՝ ունէին մասնաւոր մարդիկ որոնք լուր որսալու կ'ենէին եւ իրենց տէրանց կրկնելու կ'երթային քաղքին մէջ լուած ամէն տեսակ զրոյց եւ տարածայնութիւն: Շատ մարդ ունէր լրագրեր մը ինչպէս խոհարար մը կամ կառավար մը կ'ունենայ: Լրագրերը տեսակ մը կարասի էր մեծ ապարաններու յատուկ: Բայց այս վայելքը, այս ինքզինքն ամէն բերնի պատառ չէր, ուստի քան իմաստ պէտքը Փարիզի քանի մը կեդրոններուն մէջ ակումբներու ծնունդ տուաւ. հոն կը հասնէր կը լսուէր ամէն տեսակ խօսակցութեանց եւ լուրերու արձագանքը: Այսպէս էին Լիքսանսուրկի, Քիւլյըրի, Բալէ Ռօյալի պարտէզները: Լրագրերը կը ժողովէին նաեւ սրճարանաց մէջ, նախ իրարու հաղորդելու համար իրենց հաւաքած լուրերը, երբեմն ինքնահնար մտացածին դէպքեր, զորս քաղքին մէջ կը խուրթային ուրեւել յետոյ: Շատ չանցաւ մի քանի ակումբներ սկսան արձանագրել այդ լուրերը եւ բռնել տեսակ մը օրատետր, որոյ ձեւագիր օրինակները կը շրջէին հասարակութեան մէջ: Ադոնք ալ իրենց խմբագրատունը եւ օրինակողները ունէին, եւ թղթթակիցներ եւ բաժանորդներ՝ գաւառները: Բաժանորդագրութեան պայմանները կը տարբերէին ըստ բաղմութեան կամ նուազութեան էջերուն: Տպագրութեան արհեստը բաւական չեղաւ անմիջապէս կերպարանափոխել իրաց այս վիճակը: Կառավարութիւնը՝ ուղեւով ընդհանրապէս վարագուրել իրենց արարքը, կը խորչէին բնականաբար խրախուսել մի այնպիսի գործիք՝ որ եթէ թշնամի ալ չլինէր իրենց՝ գոնէ ախորժելի ալ վկայ մը չէր:

* *

Գաղղիոյ մէջ ամենէն աւելի նշանակութիւն ունեցող լրագիրը Gazette, Journal եւ Mercure վերնագիրները ունեցող լրագիրներն էին:

Մէքսիկա անունը կուտային այն հաւաքածոյից որոց նմանները այսօր կը կոչուին Revue (Հանդէս): Journal կըսէին այն գրութեաններուն որք ամիսը անգամ մը հրատարակուելով՝ կը պարունակէին նոր գրքերու եւ գրական դէպքերու վրայ տեղեկութիւններ: Gazette այն պրակները եւ թեր-

թերն էին, որը հասարակութեանց մէջ կը տարածուէին չարթու մէջ օր մը, զանազան երկիրներէ լուրեր տալու համար: Միայն մեր օրերն է որ խառնու (օրագիր) ըսելով կ'իմացուի ամէն տեսակ օրագիր: Սակայն տեսնենք թէ ո՞վ առաջին անգամ այդ թերթերը կը կանոնաւորէ եւ պարբերականութիւն կ'ուտայ անոնց, կամ այդ յառաջագիմութիւնը ո՞ր ի յայտ կուգայ առաջին անգամ:

* * *

Վենետիկ իրեն համար մի աղօտ աւանդութիւն ունի այդ մասին. բայց կաթէթէս բառը բաւական ապացոյց մը չէ անոր հարազատութեան: 1556ին այս անուամբ դըրամ մը կը կոխուի եւ 1760ին առաջին անգամ Վենետիկի մէջ համանուն լրագիր մը կ'երեւի, այսինքն ա՛յն պահուն երբ Գաղղիոյ անդրանիկ լրագիրը Gazette, իւր 150րդ տարին հոլոված էր, կ'ըսէ չաթէն:

Անգլիացի պատմաբան մը, Գալմըրս, Տօթերու երկիրը կը կարծէր լրագրին օրրանը. սա տրամաբանութեամբ թէ «որովհետեւ կաթէթէս վենետիկեան մի դրամ էր եւ քանի որ մէն մի աւելի մի կածէթթաի կը վաճառուէր՝ ուրեմն լրագիրը Վենետիկցոց մի գիւտն էր: Սակայն յետոյ Արքունական Միւզէն խուզարկելով լրագրոց հաւաքածոյին մէջ կը գտնէ երեք թիւ The English Mercury, 1587 թուականին հրատարակուած մի լրագիր, եւ հիացմամբ կը գոչէ Գալմըրս. «Ամէն երկիր հետազօտեցի լրագրին ծագումը եւ մեծապէս կը հրճուիմ գտնելով Անգլիոյ մէջ ա՛յն բանը՝ զոր կ'երթայի հեռաստանները որոնել: Այո՛, կըրնանք ըսել ի պարծանս իմ ազգին թէ մարդկութիւնը Եղիսաբեթի իմաստութեան կը պարտի առաջին լրագիրը»: Գոթաղգաբար, Անգլիացիք իրենք իսկ հերքեցին չարաչար իրենց պատմաբանին թիւր կարծիքը: Mercury եկամուտ ապրանք մ'էր, շատ շատ թարգմանութիւն: Մինչեւ 1622, անգլիական թերթերու անունն էր «News» որը պարզապէս թարգմանութիւն էին հոլանտական թերթերու: Նոյն իսկ Հոլանտա որ կրնար ըսուիլ օրագրի հայրենիքներէն մին՝ 1626էն առաջ կանոնաւոր եւ պարբերական հրատարակութիւն չունեցաւ:

* * *

Գերմանական լրագրութեան պատմաբանը, Բրուճ ալ, տրամաբանելու իրեն յատուկ կերպով նախ կը ճամարտակէ այն մատենագիրներու դէմ ոյք գովելի բայց անձահ եռանդով մը շատ բան իրենց բնիկ հայրենեաց կը վերագրեն, եւ յետոյ կ'ըսէ բացարձակապէս թէ Գերմանիա օրագիրներու հայրենիքն է, եւ չուզեր ի հաշիւ առնուլ այն փաստերն՝ զորս ուրիշ ազգեր ալ մէջ բերելով նոյն բանն ըսել կրնային իրենց բնիկ երկրին համար: Բրուճ կը յաւակնի ըսել թէ Գերմանացիք միայն ընդունակ էին, ի շնորհս իրենց յատուկ հանձարոյն եւ ռամկավարական կազմակերպութեան, հնարել օրագիրը ինչպէս հնարեցին տպարանը: Սոյն օրինակ փիլիսոփայութիւն մը եթէ ընդունուիլ արժէր, անտարակոյս մեծապէս պիտի պարզուէին շատ մը պատմական անլոյծ խնդիրներ: Սակայն ամենափոքր յիշատակագիր մը շատ աւելի կշիռ ունի քան թէ ամէն վերացական փաստեր: չաթէն կ'ըսէ թէ Ֆրանքֆորթի մէջ 1658էն յառաջ գերմանական օրագիր չէ տեսնուած. սակայն չուզելով այդ մութ ճանքուն մէջ երկարօրէն դեղերիլ, այս գաղղիացի մատենագիրը կը կարծէ թէ առաջին անգամ տպեալ օրագիր հրատարակելու պատիւը Պեճիոյ Անվէրս քաղքին կը պատկանի եւ կը յարէ թէ Աբրահամ Վէր Հօլմէն անուն փորագրիչ մը արտօնութիւն ստացած էր 1620ին պատերազմի, պաշարմանց եւ լուրերը տպել Ալպերթ Արքիդուքսի օրով: Այս թերթը քանի մը տարի յետոյ շարաթական կ'ըլլայ ութամսլ դիրքով. առաջին երեսը կ'ունենայ մի պատկեր որ օրուան գլխաւոր նիւթէն կ'առնու իւր նիւթը եւ Յօդ երեսն ալ կ'աւարտի մի ուրիշ պատկերով: Սկզբնական ձեւի մէջ պատկերազարդ օրագիր մ'էր սա, օրագիրներու նահապետը:

չաթէն կը խոստովանի թէ չկրնար իւր ազգին վերագրել լրագրի հնարելու պատիւը, բայց կը պարծի ըսելով թէ գոնէ իւր ազգն էր որ առաջին անգամ կանոնաւոր լրագրի մը տիրացեր էր, եւ կը յիշէ Gazette de France, ոյր հիմնադիրն եղաւ Թէօֆրաստ Ռընօտ:

Ժամանակակից քննադատ մը ըսած էր որ օրաթերթ մը ըստ երեւոյթին բան մը չէ, սակայն ամենէն դժուար ձեռնարկներէն

մին է մեր ժամանակին համար, որպէս զի այդպիսի ձեռնարկ մը յաջողէր՝ պէտք էր Ռընօտօի չափ հանձարեղ եւ կարող լինել: Ունենալու է, կ'ըսէր, ընդարձակ հմուտ-թիւն լեզուին մէջ, շարադրելու մեծ դիւրութիւն, նրբութիւն եւ սակաւարանութիւն բացառութեանց մէջ. ասոնցմէ զատ, պէտք է, կ'ըսէր, թէ՛ ծովային թէ՛ ցամաքային պատերազմներու վրայ խօսելու. կարող ըլլալ. աշխարհագրութիւն, ժամանակակից պատմութիւն եւ թագադարովց պատմութիւն գիտնալ. տեղեակ ըլլալ վեհապետաց քաղաքականութեան եւ շահերուն, արքունական գաղտնիքներու եւ ընդհանուր ազդեաց բարուցն եւ սովորութիւններուն: Վերջապէս, ըսած էր Վինսէօ Մէսլիլ, լրագրապետ մը այնքան ծանօթութիւններ ունենալու է որ չէմ հասկընար ինչպէս կը համարձակին այդ գործին ձեռնամուխ եղողները:

Այսպէս չպիտի վշատէր հաւանօրէն Վ. Մէսլիլ եթէ մեր հետ ապրէր, մանաւանդ եթէ Հայ մը լինէր. պիտի խրախուսուէր անշուշտ մեր համեստ գիտնականներէն որոց շատերուն համար հերիք է թուղթ եւ մեջան լրագրապետ ըլլալու համար:

Այլ ուստեք հայերէն լրագիր բնաւ պիտի չունենայինք եթէ այդ աստիճան խըստապահանջ ըլլայինք: Արդ Կալէթ Գր. Ֆրանսի առաջին թիւը կը հրատարակուի Բարիզ, 1631 մայիս 30ին եւ զարմանալի զուգարի-սրութեամբ մը այդ առաջին թուոյն առաջին լուրն ալ մեր մայրաքաղաքէն կ'երթայ, աւասիկ.

« Կ. Պոլիս, 2 ապրիլ 1631

« Պարսից արքայն 13 հազար ձիաւոր եւ 30 հազար հետեակ զօրքով կը պաշարէ զՏէլ որ կրկին առուր հեռի է Բարսելոնէն, ուր մահու սպառնալեօք երթալ կը հրամայէ Մեծ-Պետը (Grand-Seigneur) իւր Ենի-շէրիներուն եւ չնայելով իրաց վիճակին կը շարունակէ խստիւ վարել ծխողները զորս խեղդամահ ընել կուտայ մուխով:

Պարսից Շահն էր յայնժամ 2ամ Միրզա Կամ Շահ Սէֆի, որդի Շահաբասայ, եւ Օսմանեանց Սուլթանն էր Մուրատ Դ.

Մ. ՆՈՐԻԿԵԱՆ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ՎԻՔԹՈՐ ՀԻԿՈ

Ս.

Այս գարն երկու տարեկան էր, Հռոմ յաջորդէր Սպարտայի . . .

Յանյոթամի Պրզանտոն, սպանիական հին քաղաք, Սուրացոյ Հովին նետուած ցորենի հատի նման Պրթոն եւ միանգամայն Լոռն արիւնէ մը ծնաւ Տժգոյն տղայ մը, առանց հայեացքի եւ ձայնի, Որքան ալ տկար լինէր, զերգ մի ուրուական, Ամենէն լքեալ ի բաց առեալ իւր մօրմէն, Եւ ղը վզին համար, աղաղուն եղեգնի մը պէս ծռած,

իւր դագաղն ու օրրանը պատրաստեցին միտն-գամայն:

Այդ տղայն զոր կեանքը կը ջնջէր իւր գրգէն, Եւ որ ապրելու համար չունէր իսկ օր մը, Ես էի. . .

Բաւական տարիներ յետոյ, Աշտն Գրեհ-նեբուն մէջ, Հիւկօ այս գործովսի ու փախկիկ տողերով կը պատմէր իւր ծնունդն: Արդարեւ իւր ծնած միջոցին այնքան տկար էր ու նիհար, որ դայեակն յայտարարեց թէ չպիտի ապրէր: Իւր մօրը հաւատն ու անոր «խանդագորով խնամքները» փրկեցին զայն: Եւ ապա այդ «տժգոյն» աղան էր որ գրեթէ ամբողջ դար մը լցուց իւր հանձարոյն արտադրութեամբ, իւր դաշնակութեանց հեղեղներով, իւր փառքին մեծութեամբ:

Ներորդ սրդին էր Սիփիսպէր Հիւկօ զօրավարին: Առաջին սրդին կը կոչուէր Ապէլ, եւ երկրորդն Էօթէն, որ փայլուն յոյսեր ներշնչելէ յետոյ մեռաւ 1837ին: Ըստ իւր բացատրութեան, Հիւկօ ամբողջ Եւրոպա պարտեցաւ «ծնելէ առաջ»: Իւր հօրն հետեւեցաւ Կայսրութեան պատերազմներուն մէջ, նախ յիտալիա, ուր 1807ին եւ 1808ին Սիփիսպէր Հիւկօ Քալապրոյի նահանգի մը կառավարիչն էր: Յաջորդ տարիներն անցուց ի Փարիզ, Ֆէօյեանթիինի անելին հին տան մէջ: Ո՛վ չէ կարդացած հուշակաւոր տողերը.

Պարտեղը մեծ էր, նսեմաստուեր, խորախորհուրդ, Ծաղիկներով զարդարուն, որք արտեւանանց պէս բացուէին:

Հիւկօ անցուց իւր մանկական տարիները անուշ ու բեղմնաւոր կեանք մը վարե-

լով, իւր մօր եւ այն փոքրիկ աղջկան քով որ ապա իւր կիներ պիտի լինէր : 1811ին Սպանիա գնաց հօրը միանալու որ երեք նահանգաց կառավարիչ եղած էր : Վիքթոր Հիւկօ Մատրիտի մէջ աղնուականաց դպրոցը դրուեցաւ : Գիտութեամբ է յետոյ այն խորին եւ տեւական տպագրութիւնն զոր Սպանիա ունեցած է բանաստեղծին երկտասարդ երեւակայութեան վրայ : Սպանիոյ երկինց հրատոշոր կապոյտին ներքեւ, զգացած էր իւր սրտին առաջին տրոփիւններն : Անդ է որ, ինչպէս գրած են ապա իւր մտերիմները, սիրահարեցաւ, այդ ութ տարեկան տղան, եւ սիրահարեցաւ չափահաս անձի մը բոլոր յուզումներով : 1812ին, Ֆրանսա վերադարձուելով, վերսկսաւ, երեք տարւոյ չափ, իւր անուշ կեանքը, հօրը հրակողութեան ներքեւ : Բայց բանաստեղծութեան կոչման համար ցոյց տուած բոլոր նշաններուն հակառակ, հայրը Բազմարուեստեան դպրոցը դնել տուաւ զայն որպէս զի զինուորական ասպարէզին պատրաստուի : Վիքթոր Հիւկօ անդ ուսաւ ուսողութիւնն առանց անտես առնուլ բանաստեղծութիւնը : Տիկին Հիւկօ, իւր գրքին մէջ, ոյր վերագիրն էր Յիւստինիանոս Գ. Վիկտոր Հիւկօ էր Գրքերի եւ Ժողովրդի յիշատակած է անոր փորձերէն մի քանին, թարգմանութիւնը լատին բանաստեղծներէ, տաղեր, առակներ, երգիծաբանութիւններ, հանելուկներ, գեղօններ, ինչս ալ Քասթիլի վրայ Գրքերի մը հատակոտորք եւ Իրիսիան անուամբ ողբերգութիւն մը : Այդ փորձերը, կ'ըսէ Տիկին Հիւկօ, քաղուած են գիշերօթիկ վարժարանին մէջ յորինուած ոտանաւորներու տետրակներէ, որք տասնի չափ են : Անոնցմէ հնագոյնը, որ ութսուն եւ հինգ կտոր կը սարուանակէ, գրուած է 1815ին, մինչ բանաստեղծը տասներեք տարեկան էր :

1817ին, Ֆրանսական Ակադեմիոյ զրկեց ոտանաւոր թուղթ մը Ռոստանոսիան Սոստանոսիանց վրայ, որ միջանակի արժանի դատուեցաւ, այլ չստանալուցաւ, որովհետեւ ենթադրուեցաւ թէ հեղինակը ծաղրած էր Ակադեմիան յայտարարելով թէ տասն եւ հինգ տարեկան էր : Տղայն բերաւ իւր ծննդեան վկայագիրն, այլ չուզեցին տրուած օրոշման մը վրայ վերադառնալ :

Այս յաջողութիւնք գէթ համոզեցին հայրն որ թոյլ տայ տղուն հետեւիլ իւր գրական կոչման :

1819էն 1822, գեղօններ ներկայեց Թուլուզի Փլորեան խաղուց Ակադեմիային, որք ստանուեցան եւ անմիջական յաջողութիւն մ'ունեցան, այնպէս որ հեղինակը մեծահնչակ տեսաւ ինքզինքն իւր կենաց այն վայրկեանին, ուր տակաւին շատեր կ'աշխատին ուսումնարանաց նստարաններու վրայ : Շաթոպրիան, կարդալով Պէրիի դքսին վրայ գրած գեղօնը, «վսեմաղայ » անուանեց զայն : Գրական Պահպանողական հանդիսին մէջ, զոր ինք հիմնած էր եւ կը խմբագրէր եղբարցը հետ, Հիւկօ կը հրատարակէր ո'չ միայն բանաստեղծութիւններ, այլ նաեւ քննադական եւ խմատասիրական յօդուածներ : Այդ լրագրին մէջ է որ հրատարակուեցաւ նաեւ իւր առաջին վէպերէն մին, Պիւլ-Ժակ, զոր ապա աւելի ընդարձակեց : Իւր մօր աղքատեցութեան ներքեւ, արքայական եւ կաթոլիկ էր այն ատեն : Ատեն մը իւր խոստովանահայրն էր Լամբէ : Այդ ժամանակները կ'ստորագրէր Վիքթոր-Մարի Հիւկօ :

Իւր մայրը մեռաւ 1821ի յունիսին : Հայրը, փափաքելով որ Բազմարուեստեան դպրոցը մտնէ, առաջարկեց թոշակ մը կապել իրեն եթէ գրականութիւնը թողլով ուրիշ ասպարէզ մ'ընտրէր : Հիւկօ մերժեց, իւր առաջին հրատարակութիւններէն 800 ֆրանք չահած էր, որոցմով ասպարէս ամբողջ տարի մը : Իւր թշուառութեան այդ ժամանակներն յիշած է նկարագրելով Մարիուսի վշտաշարժար երկտասարդութիւնն թշուառաց մէջ : Իւր Ապէլ եղբայրը, նորա Գեղծներէն մեզս մը գողնալով, գրածաթի մը միջոցաւ տպել տուաւ : Լուի ԺԸ թագաւորն, այդ հատորը կարդալով, իւր անձնական գանձէն 1000 ֆրանքի թոշակ կապեց Հիւկօյի : Վիքթոր Հիւկօ, որ դիւրակեցութեան կ'սպասէր ամուսնանալու համար իւր հօր ընկերներէն միոյն աղջկան, Օրիորդ Ֆուլէի հետ, զոր ի տղայ տիոց անտի կը ճանչէր եւ կը սիրէր, անմիջապէս կարգուեցաւ : Իւր թոշակը կրկնապատկեցաւ հետաքրքրական դէպքի մը պատճառաւ : Նոմակ մը, որով ասպատան կ'ընծայէր իւր տան մէջ կառավարութեան թշնամիներէն միոյն, թագաւորին յանձնուեցաւ : Լուի

վերնագրէն, զոր ասլա Ալֆոնս Գառ դործածեց նորա հաւանութեամբ: Այդ պատմական վէպին մէջ սիրունած հնագիտութիւնն, եւ շնորհին ու ազդեցութեան, գեղեցիկն եւ տգեղին, պարզին եւ անհեթեթին կամուր խառնուրդը, նկարագրոց տարօրինակութիւնը, ամբողջին շահեկանութիւնը Հիւսիսի հրաշակերտներէն մին ըրած են զայն:

1830ի յեղափոխութիւնն ազատութիւն տուած էր Մարտին Տըլորի որ ներկայացուցաւ 1831ին: Ժողովուրդն աւելի հանդարտ կերպիւ ընդունեց զայն. մտքերը փոխուած էին մէկ տարուան մէջ: Արքայն Վէֆան (22 նոյեմբեր 1832) թաղերգութեամբ, բանաստեղծը վերադարձնելու կուռի բռնուեցաւ գրաքննութեան հետ: Ի զուր հեղինակը պաշտպանեց իւր խաղին բարոյականութիւնն առեւտրական դատարանին առջեւ: Կամբաստանէին զայն մանաւանդ թէ պատմութիւնը կը խեղաթիւրէր: Արգելքը մնաց եւ Արքայն Վէֆան երկրորդ ներկայացումը առաջինէն յիսուն տարի յետոյ, 1832ին տեղի ունեցաւ: Վերջոյ Հիւսիս յաջորդաբար տուաւ թատրոնին Լուրէնս Պարմէն եւ Մարտին Թիւր 1832ին, Անճէլ 1835ին, Ռիւս Պլա 1838ին եւ Պերկիւսէն 1842ին: Այս խաղերու առաջիններն յաջողեցան, թէպէտ միշտ սաստիկ կերպիւ քննադատուեցան հակառակորդներէ որք երբէք չէին յոգներ: Պերկիւսէնը միայն քանի մը ներկայացում ունեցան. այդ խաղն, ուր բանաստեղծին վեհ երեւակայութիւնն սղափորէն կը շարժի առասպելին մէջ, թերեւս այն խաղն է ուր լաւագոյն կ'զգացուի իւր ճաշակն հրակայական բաներու համար: Պերկիւսէնէն յետոյ, Հիւսիս, խոնջեալ, այլեւս թատրերգութիւն չգրեց:

Սակայն թատերական այդ այեծուի մըրիկին մէջ չբաղբեցաւ ոտանաւոր գրելէ. մնաց որ, իւր կենաց մէջ անընդհատաբար զրած է բանաստեղծութիւններ եւ մուսայն եղած է նորա բոլոր սրտայուզութեանց աւանդապաշն: Յաջորդաբար հրատարակեց 1831ին Անտի Գրեմմէն, ուր մտածմանց երազուն շնորհը եւ ձեւին ներդաշնակ ձոխութիւնն այս անգամ լուեցուցին ամենէն կատարի քննադատները. 1835ին, Վերմուրայ Երբէր 1837ին, Ներին Զայէր 1840ին, Զաւաթայիլ եւ Սորէր: Նոյն ժամանակամիջոցին կը վերաբերին նաեւ Ռասմասիբիլի Բէն Միւսայիլ Էրայ, Քիւր Կէ (1834), Հիւսիս (1842), չողովուրդն յիշատակ արուեստագէտ եւ բանաստեղծ ուղեւորի մը:

ԱՌՈՂՋԱԲԱՆԱԿԱՆ

ՅՈՒԻ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Իրաւամբ ըսած է հեղինակ մը թէ՛ աւելի դիւրին է տասը յոռի սովորոյթի վարժեցնել մարդիկը քան մէկ բարւոյն:

Ծխախոտի գործածութիւնը՝ որ դրեթէ ընդհանրացած է ախարհին մէջ, կ'երեւի թէ չէ բաւած մարդկային տգէտ քմահաճոյքը յաղեցնելու: Թեմպէն որ անոր եղբայրն է եւ որ, սակայն, ո՛չ մեր երկրին բերքն է եւ ո՛չ ալ սովորական էր մեզ, այժմ ընդհանուր գործածութեան մտած է: Անքե՛ որ կողմ դարձունես, ծեր ու մանուկ, երիտասարդ եւ կատարեալ մարդ, ձեռքերին Գրեմմէն կը կը կը կը ընել տալով կը զուարճանան: Օ՛ ... Ի՛նչ զուարճութիւն ... սակայն հազար ոսկի ալ տային, չպիտի գտնէին աւելի ազդեցութիւն մը:

Եւ յիշաւ ի՛նչ է թէմպէրին. ուժգին թոյն մը՝ որ կ'ազդէ ջղային դրութեան վըրայ նախ զայն թեթեւօրէն զրգուելով, որ իյայտ գայ ծխողին զգացած Կէյֆով եւ ապա սաստկապէս ընդարմացնելով նոյն զըրութիւնը:

Հետեւաբար թէմպէրին վնասակար է ջղային դրութեան վրայ իւր ազդեցութեամբ որոյ հետեւանք կրնան լինել անթիւ Գրեմմէն ըսուած հիւանդութիւնը եւ ուրիշ նմանօրինակ ախտեր, եւ վնասակար է նոյնպէս մարսողութիւնը խանդարելով, ինչպէս շատ անհատներէ ըսած եւ ես ալ անձիս վրայ փորձած եմ:

Օ՛ն ուրեմն ... կլկլակի սիրահարներ, մանաւանդ զուր երիտասարդներ, փութացէ՛ք թողուլ այն չարածճի թէմպէրին՝ որ այսպէս տեսակ տեսակ վնասներ կը հասցունէ ձեր առողջութեան:

* *

Ի՛նչ պժղալի սովորութիւն մ'է նաեւ օրորդաց ու տիկնանց գործածած ներկը՝ որ արուեստական գեղեցկութիւն յառաջ բերելու նպատակ ունի: Թողո՛ւնք ասոր բարոյական կողմը՝ որ աւելի բարոյախօսներու կը վերաբերի քան առողջաբանի մը, քանի՛օն

միասակար են այն նիւթեր՝ որք այս նպատակաւ կը դործածուին :

Յիշեալ նիւթերուն մէջ կը գտնուին կապարի բաղադրութիւններ՝ որոնք թուեալոր են եւ որոնք արդարեւ իրենց յոռի ազդեցութիւնը ի դործ կը դնեն : Ներկ դործածող օրրորդաց եթէ լինարերը ու սկաւայները քննուի, կը տեսնուի որ առաջինները հիւանդ եւ արիւնեղու հակամետ, իսկ երկրորդը սեւցած են դէպ ի վարիդին :

Ասոնցմէ զատ ջղային հիւանդութիւնք ալ կրնան ծնիլ ասկէց, եւ եթէ այդ ակտերու պատճառաբանութեան մէջ բժշկական ծառօթութեանց անկատարելութիւնը ուղղորդութեան առնուի, ներկերու ազդեցութիւնն ալ կրնանք կարգել այն տեսակ պատճառաց մէջ՝ որք թէեւ լաւ գիտցուած չեն, սակայն պէտք է որ կարեւոր դեր մը ունենան ակտածնութեան մէջ, որովհետեւ թոյններ են :

Ինչ որ ալ լինի, իբրեւ առողջաբան, խստիւ կ'արգիւնը ամեն անոնց՝ որք գիտեն առողջութեան յարգը, չը դործածել բնաւ ներկ ինչպէս ալ շինուած ըլլայ :

*
* *

Յոռի սովորութիւն մ'ալ կ'ուզէ՞ք :

Բնաւ դժուարութիւն չալիտի կրենք զանոնք գտնելու երբ մանաւանդ մեր ժողովուրդն է անոր հետեւողը :

Պիւսան՝ զոր գարեջուր կը կոչեն շատեր եւ որ սակայն լոկ դարիի ջուր չէ, սարսափելի սպառում մ'ունենալ սկսած է մեր մէջ : Ո՛ր կողմ երթաս, մինչեւ իսկ Գումգաիու, Սամաթիա, Իւսկիւտար եւ եւ, ուր սակայն չարագործ օղին հեռի չէ դեռ տիրապետէ, գարեջրատուններ կը տեսնուին, ինչպէս կ'ըսուի :

Բայց գիտնալով կը խմէ ժողովուրդը այդ եւրոպական ըմպելին՝ որ Սէն գետին չափ կը հոսէ մարդկային կոկորդներէն :

Ամենեւին . մինչեւ իսկ շատեր չեն դիտեր թէ ինչ է անոր բաղադրութիւնը : Արդ կը ժողովանք այս առթիւ տեղեկացնել թէ պիւսան դարիի եւ հոսքի ըստած բոյսի մը խմորի մը միջոցաւ թթուելէն յառաջ կուգայ :

Ինքնին դէչ չէ պիւսան, մանաւանդ կերակուրէն առաջ, բայց երբ տղէկ տեսա-

կը ըլլայ, որովհետեւ մեծ մասը խարդախեալ է :

(Երա՛նի թէ հետամուտ մարդ մը տընտեսագիտական պիւսան շինելու համար դործարան մը բանար աստ) :

Այսու ամենայնիւ պիւսան երբ չուտ խմուի, ոչ միայն ակտորժակը կը դոյնէ, այլ եւ միզային դործարաններն ալ կրնայ խանգարել : Ուստի պէտք է միշտ չափաւոր խըմել եւ ո՛չ թէ կարգ մը անմիտ երիտասարդաց պէս մինչեւ ճաթելու աստիճան կընել, ինչպէս որ անցեալներս այսպիսի եղելութիւն մը տեղի ունեցաւ :

ՏՈՔԹ . ՌՕՊԵՆՍՈՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

1882ի ՄԵԾ ԳԻՍԱԽՈՐՆ

ՄԱՐԳՆ

Երբ հեղաքայլ փափուկ ճեմով,
Սահիս երկնիցն ընդ կամար,
Դեղձան վարսիցդ հոյլ պարզելով,
Վայրիկ մի կա՛ց, ա՛ռ դադար .
Ունկն դիր ինձ, որ դերդ փոշի,
Դողամ քայլիցդ յանդիման,
Եւ, ուրուական կամ դիցուհի,
Լո՛ւր եւ տո՛ւր ինձ ողորոսխան :

Կապուտագեղ Ովկէանին
Դու ուղեւորդը անանուն,
Վսեմ դնացիւք քո բոցածին՝
Միթէ երթա՞ս ջերմագոյն
Փափուկ սիրոյ տուեալ համբոյր
Քո մեծ արքայ, արեգին,
Յանձնել վարսամդ ոսկեգանգուր,
Եւ հրաշէկ փայլքո ճակատն :

Գնա՞ս արդեօք յանջրպետին,
Արծաթափարս գեղուհի,
Ձի համօրէն ազգ մարդկային,
Հայեցուածով կորովի,
Ոսկենշոյլ գեղեցկաշար
Ընդ աստեղացն յօրինուած,
Տեսնէ օրհասդ շիջեալառ
Ի խորս անեղր եթերաց :

Մէտէորայդ նշուազեղ ,
Քեզ արշալոյսն ի՞նչ թուի
Իւր մատներով բոսորազեղ .
Ի՞նչ այն աստղեր լուսարփի ,
Որոց կայիցն հմուտ ես դու ,
Կղզեաց բոյներ շողակաթ ,
Որ անսահման Ովկէանու
Են հիասքանչ միակ զարդ :

Աստեղակերսւ ընդ մէջ մարմնոց
Երբ անցնէիր հեղադնաց ,
Տեսա՞ր արդեօք սլառներ մարդոց
Յաւէտ անտես մեր աչաց .
Հանգուճառի՞ս մեզ վարեն կեանք ,
Պատերազմի սէր ունի՞ն
Այդ մարդիկներ եւ կամ ճիւղալք
Եթերական աշխարհին :

Տիեզերաց խորէ՞ն արդեօք ,
Ո՛ր անծանօթ գեղուհի ,
Գաս մորմորմամբ ու անձկանօք
Վարել դէպքերն աշխարհի ,
Յորոց սարսին մարդիկ համայն .
Կամ թէ ժպտիլ խնդաղին ,
Տեսեալ զաղէտս եղերական
Արհաւրաից վայրկենին :

Յերկինս արդեօք վարե՞ս զանխուլ ,
Ո՛ր անցաւոր հերատուկ ,
Գունդէ ի գունդ արծաթածոյլ
Խորհրդաւորն այն բազուկ ,
Որ բոցերով իւր շեշտակի
Համայն ողւոյ եւ աշխարհաց
Տոչորեւով զոսկերոտի ,
Կազմէ քսոսն անթափանց :

Արդեօք ձեռամբդ հրածորան ,
Ի մէջ դաշտաց Ուրանիոյ ,
Գա՞ս , իբր ոսոխ , զցեղ մարդկան
Առնել ողջոյն ճարակ հրոյ ,
Անպարագիր հովտաց վերին
Թափառականդ երկնաջու ,
Եւ կամ թերեւս իսկ աշխարհին
Բերել քանդուճն ահարկու :

Ճիւղալքին պատերազմաց
Արդեօք բանբե՞ր ես գուժկան ,
Կամ թէ վուժթաս ի մէջ ազգաց ,
Յանձանօթի կերպարան ,
Արծարծել մարտ տաթխայոյզ ,

Եւ բերկրանօք ի դէտ կալ ,
Մինչ մարդկութիւն խելակորոյս
Յաւէտ յասլուչ մնայ կրթեալ :

Ո՛վ երկնային պայծառութեանց
Նորանշոյլ թագուհի ,
Միթէ մարդկան սին մեծութեանց
Զփոքրութիւն վիթխարի
Գաս ջախջախել իշխանաբար ,
Ու մէկ բախմամբ սաստկակոծ
Զհինաւուրց մղել զաշխարհ
Զդոյութեան անդր ի ծոց :

Ք Ի Ս Ա Ի Ո Ր Ն

Ի՞նչ բաղմակերսւ տան քեզ անուն ,
Օղածածան նուրբ փոշի ,
Որդն կամ ճանճ , մարդ կամ մըջիւն ,
Դու ընդ սփիւռս աշխարհի ,
Աւազի մ՛ես հատիկ միայն
Անտես բնաւ իմ աչաց ,
Եւ կամ հիւլէ կորստական ,
Զանդուած հպարտ խոհերաց :

Կամի՞ս քո տան պատուհանէն
Կալ երկնայնոց ի զնին ,
Եւ թափանցել , իմ ընթացքէն ,
Անճառ դաղտնեացըն վերին ,
Ո՛ր երկրաբնակդ ուշամոռաց .
Բարւոք է , լուր ուրեմն ինձ .
Խելամուտ լեր անհուն դաղտնեաց ,
Թուլ կատարուի սրտիդ իղձ :

Այն անջրպետն ուր ես ծնայ ,
Լայնատարած երկնից խոր ,
Ունի բանակ մի լուսաջահ
Արեգներու բիւրաւոր ,
Մեծամարմին հսկայք բնութեան ,
Ոյր օրինաց եմ հլու .
Այլ ստուգիւ ինձ անարժան
Է քոյդ արեւ լուսատու :

Ո՛րքան լինի դա պաղպաղուն ,
Բիւր թափառող մարմիններ ,
Ոյց նման ո՛չ թուի համբուն
Ո՛չ նշողիւք բոցահեր ,
Եւ ո՛չ տեսլամբ վեհադիտակ ,
Փոխ տան դիմացն իւր տոգոյն

Անհատահոս նշոյլ եւ կեանք ,
Զօրութիւն եւ Զերմութիւն :

Արշալոյսն իսկ , որ քեզ թուի
Բոսորագեղ քրքումացան ,
Այլ դալկահար եւ տխրալի ,
Յերեսս երկնից անսահման ,
Ուր պերճ բաշերն իմ ծածանին ,
Լոկ ցոլացումն է տփռոյն
Թերակատար քո արեգին
Աղօտաջահ լապտերոյն :

Ընդ անջրպետն անհուն անծիր ,
Հանդիսարան իմ փառաց ,
Թէ հուս առ իս սաւառնէիր ,
Հէգ նանրախոյզ արարած ,
Աչացդ հանդէպ տեսնէիր պարզ
Բիւրիցս բիւր աշխարհներ ,
Բնակեալ անթիւ իրբեւ դաւաղ
Խոնարհ ցեղօք բազմասեր :

Տեսանէիր , անպատրուակ ,
Աստեղց երկնից անթիւ պար ,
Լուսով պայծառ ու անապակ ,
Ճախրել կապոյտն ի կամար .
Տեսանէիր դու Պէթէէթօղ , (*)
Էբէ , Ռիթէլ եւ Առնէպ ,
Ընդ Բօլիւքսի եւ Վանտանփէօղ
Եւ Ալդայիր եւ Տընէպ :

Սըրանայիր ակնապարար ,
Նշմարելով Արթիւրիւս
Տպաղլոնն այն մեծատարր ,
Ինչպէս նաեւ Սըրիուս ,
Այն աղամանդ հակայական ,
Եւ բիւր աստղեր այլ եւ այլ ,
Որք չեղողեն , լուի անձայն ,
Ի ծոց երկնից ոսկեփայլ :

Այլ կա՛ց յերկիրդ այդ ստորին .
Ակնողեացդ , անարգել ,
Լուսապայծառ անսահմանին
Ձէ մարթ զխորս նշմարել .
Անդուստ դիտէ՛ դիւս , ակնապիշ ,
Եւ դիմ բոյրեր ջոկ առ ջոկ ,
Անեղբութեան մէջ բոցանիշ
Փայլեալ ամբաւ գոլորէօք :

(*) Աստղերու ֆրանսական անուններ .

Ահն ի սրտէդ վանէ՛ , պանդոյր .
Զինչ դու , եւ ես իւրովի ,
Հիւլէ տխեղծ խորհրդաւոր ,
Այն օրինաց անյեղի ,
Զոր եղ Աստուած անալարագիր ,
Եղականաց բովանդակ ,
Նմ ստուգիւ ճակատագիր
Ընդ մէջ երկնից կապուտակ :

Ձեմ ես մարտի կամ հաշտութեան ,
Ո՛չ աղէտից , ո՛չ բարեաց
Բանբեր բնաւին առ հէգ խուժան .
Անսահմանէն դամ թափանց ,
Անսահմանին եմ խանդակաթ ,
Էի յաւէտ յանսահմանն ,
Յանսահմանին թռչիմ ազատ ,
Դէպ յանսահմանն ընթանամ :

Թարգմ. Ի Ֆրանսէրէնէ

ԷՕԺ. Ա. ՇԸՎԱԼԻԷ

ՍԱԹԻՆԻԿ Գ. ՀԱՐԷՆՑ

20 մայիս 1883

Գատը-գիւղ

Գ Ր Ա Կ Ա Ն

ԿԻՆ ԱՐՈՒԵՍԱԳԷՏԵՆԵՐՆ

Ի Մ Ի Ի Ն Ի Խ

Գերմանացի նշանաւոր գրագիտուհի թատեր-
գակ Էմմի Լէվի այս խորագրով բանասիրական մը
գրած է վերջերս «Ֆրանքֆուրթեր Յայթունկ» լրագ-
րի մէջ : Այս յօդուած յոյժ հետաքրքիր նկարա-
գրութիւններ պարունակելով Միւնիխի կենաց երե-
ւոյթին , գերման կանանց անկախութեան եւ գոր-
ծունէութեան մասին , աւելորդ չլինի յառաջ բե-
րել աստ ամոր գլխաւոր կէտերը :

Առաջին տնգամ որ Միւնիխ եկայ , բա-
րեկենդանի ժամանակ էր :

Պարահանդիսի եւ ընդհանրապէս դե-
սանաց համար այնքան դանազան յայտարա-
րութիւններ փախուած էին պատերուն , որ
չգիտէի ո՛ր գուարճութիւնը նախընտրել .
սրճարան մը մոտայ եւ այն տեղ սկսայ դի-
տել յայտարարութիւններն . եւ երբ կը վա-
րանէի տարակուսութեանց մէջ , ներս եկաւ
Միւնիխի ծանօթներէս մին , տիկին Ք :

— Վա՛յ , դուք այստեղ էք . Էնչ լաւ

եղաւ, դռնէն քովն նստելով: Կարծեմ թէ ինձ եւս այցելելու դիտաւ որովհետեւ ունէիք, ուստի պատրաստ եմ կատարել ձեր ամեն փափաքներն: Կը կարծեմ նոյնպէս թէ առաջին անգամն է որ կ'այցելէք մեր քաղաքն, այնպէս չէ՞:

— Այո, եւ ադոր համար կը տարակուսիմ թէ ո՛ւր պիտի երթամ, ըսի խնդալով: Եւ յայտարարութեանց ահագին թերթեր ցուցնելով անոր,

— Ո՞ր գրասանքին հետեւիմ:

— Եւ ո՛չ իսկ միոյն, այլ ինձ հետեւեցէք, ձեզ համար կը ձարեմ Արտիստիկանաց պարահանդէսի տոմսակ մը զոր այլեւ զըրամով անգամ անկարող են գտնել:

— Արուեստագէտ կանանց պարահանդէսը, դռնէն բերկրութեամբ, ո՛րչափ ընտրակալ եմ ուրեմն այս հանդիպումէն եւ ձեր հաճոյակատարութենէն: Շատ անգամներ լսած եմ Միւնիխի արուեստագէտ կանանց տօներու մասին...

— Իսկ ասոր մասին, երբէք, ընդհատեց խօսակիցս. այս պարահանդէսն այնքան եղական բան մ'է որ կարելի է հանդիպիլ մեր քաղաքին մէջ միայն. սակայն աւելորդ քաջանել չեմ ուզեր. երբ տեսնէք, անձամբ կը դատէք այն ժամանակ:

— Բայց ի՞նչպէս պիտի հագուիմ:

— Այդ մասին առանձին կանոն մը չկայ, սակայն մեծ գոհունակութիւն պիտի զգաք եթէ բոլորովին դիմակաւորուիք:

Կրօնաւորութեան անսովոր զգեստն ընտրեցի եւ նշանակեալ երեկոյեան սիրելի բարեկամութեան ընկերակցութեամբ պարահանդէս գացի:

Հիանալի եւ նորանշան պատկեր մը ներկայացաւ աչքիս առաջ. դահլիճի հանդիսականք թուէր թէ ժամանակաց ամեն ազգերու ներկայացուցիչներէ կազմեալ էին, այնքան ճիշդ ու այլազան էին նոցա հագուստներու ձեւերն. ամէն բոլոր նորանոր տեսարաններ ուշա կը գրաւէին. ամեն ոք կ'զբօսնուր, կը խնդար եւ ուրախ ուրախ կը խօսէր մարդու մը կամ կնոջ մը հետ: Տակաւն երբէք տեսած չէի աւելի եռանդուն, կենդանի ու զուարթ ընկերութիւն մը:

Կրօնաւորութեան հագուստս սակայն քանի մը բոլոր ծաղու առարկայ եղաւ:

— Նայեցէք կրօնաւորութեան: Ի՞նչ կ'ը-

նես այստեղ, հարցուց ինձ փոքրիկ սիրուն գեղջկուհի մը: — Գնա, կուսանոցդ վերադարձիր, փափաց ահանջիս կուպրի պէս սեւ սատանայ մը, եթէ ոչ իմ քով կը տանիմ քեզ...: Ամեն ինչ բերկրալի տպաւորութիւն մը կ'ընէր վրաս, բացի ասպէտներու եւ տիկնանց մէջ տեղի ունեցող ազատ շարժումներն եւ չափազանց անվայել ձեւերը: Կուգէի դիտողութիւն ընել այս կամ այն լուսարարութեան իւր համատեղութեան սահմանէն դուրս ելնելուն համար, կամ թէ զարմանքս յայտնել յանձնախմբի անդամներէն միոյն չափազանց ազատ շարժմանց համար, երբ յանկարծ առողջ եւ գեղեցկապաղմ գիւղացի երիտասարդ մը ծունդերուս վրայ նստաւ գիւղական կատարեալ արտասանութեամբ մը լսելով:

— Անշուշտ թոյլ կուտաս, կրօնաւորութեան, որովհետեւ ամբողջ գտնել չեմ կարող:

Օձէն թունաւորութեան նման վեր ցատկեցի եւ մէկդի հրեցի անախտան. ասոր վրայ ընդհանուր քրքիջ բարձրացաւ, այո, պարոններ, ընդհանուր քրքիջ: Յուզուած եւ շփոթուած էի: Ի զուր կ'ստատէի որ տիկին Ք. եւ այլ մեծ կանայք որ քովն նստած էին, զգուանք արտայայտէին ինձ եղած յանդուգն անարգանաց համար: Ամենուն աչքերուն մէջ կը փայլէր գոհունակութիւնն եւ դիմաց վրայ ժպիտն. ի վերջոյ ստիպուեցայ անկեղծօրէն զարմանքս յայտնել բարեկամութեան պարահանդէսին մէջ տիրող ձեւերու ազատութեան մասին:

— Ձեւերու ազատութիւն, կրկնեց տարակուստիան եղանակաւ մը, ի՞նչ ըսել կ'ուզէք:

— Ո՛հ, եթէ այս ձեւերու ազատութիւն չէ, այն ժամանակ պիտի խոստովանիմ թէ Միւնիխի բարձրերն յոյժ տարօրինակ են:

— Լսեցէք, խնդրեմ, յարեց բարեկամուհիս ըստ երեւոյթին վշտացած իմ խօսքերէն, ի՞նչ կայ աստ տարօրինակ, եւ ո՞րպիսի անբարոյական դէպք տեղի ունեցած է: Միթէ անբարոյակամութիւն է եւ անվայելուչ, երբ կանայք հրապարակաւ կը համբուրեն զիրար:

— Կանայք, ըսի հեղեղութեամբ, հապա նայեցէ՛ք սա սպային որ կը գրկէ իւր խօսակից կինը. նա՞ ալ կին է:

Եւ ակամայ սկսայ խնդալ :

— Անտարակոյս , պատասխանեց տի-
կին Ք :

— Իսկ այն պարոնները :

— Կիներ են :

— Իսկ այն վայելչագեղ երիտասարդն
որ նստաւ ծունդերուս վրայ :

— Կին է , ամենքը կիներ : Միթէ դուք
կը կարծէիք թէ ա՛յր մարդիկ են , հարցուց
բարձր քրքիջ մը արձակելով . ուշադրութիւն
չը դարձուցի՞ր այդ այս մարդոց ձայներուն .
զարմանալի բան մը չը նկատեցի՞ր անոնց
մէջ :

— Արդարեւ , ըսի , ինձ կը զարմացնէր
նոցա ձայներու եղանակը :

— Միթէ ձեզ չը պատմեցի՞ որ արուես-
տագիտուհեաց պարահանդէսը կանանց պա-
րահանդէս է միայն , եւ այր մարդիկ մուտք
չունին անդ ո՛վ եւ լինին :

— Ոչ , չէի գիտեր :

Եւ յիշաւ Տիկին Ք. այս պարագայի
մասին բան մը ըսած չէր ինձ . . . : Կանանց
պարահանդէս . — արդարեւ եզակի է :
Աւելի քան 400 կիներ եւ ոչ մի այր մա՛րդ :
Եւ այնուամենայնիւ լինի այսքան ուրախու-
թիւն եւ զուարճութիւն :

Նոր զգացումով , նոր հետաքրքրու-
թեամբ սկսայ դիտել այս տարօրինակ ըն-
կերութիւնը . մըշտ ժպտելով կը պատասխա-
նէր բարեկամուհիս ամեն մի հարցմանցս :
Տեղեկացայ թէ պարահանդէսին կը մաս-
նակցէին արուեստագէտներու , բանաս-
տեղծներու , գիտնականներու եւ այլոց կա-
նայքն : Կը զարմանայի սակայն թէ «Րալիսի»
ճարտարութեամբ այն երիտասարդ «այսինքն»
կը կատարէին իրենց դերերն եւ «Րչալի» կա-
տարեւագէտ կ'իյնային կանանց ետեւէն :

* * *

— Եթէ արուեստագէտ կիներն աւելի
մօտէն ճանչելու փափաք կ'զգաք , ըսաւ յե-
տոյ տիկին Ք. , եկ օր մը նոցա «որոշեալ օր-
ուան» , կամ աւելի ուղիղն «որոշեալ երեկո-
յին» երթանք ներկայ գտնուինք :

Հարկ չկայ ըսել թէ ուրախութեամբ
ընդունեցի այս առաջարկութիւն :

— Ամենամեծ գոհունակութեամբ , պա-
տասխանեցի . այնտեղ նոյնպէս կիներուն
միայն թոյլատրեալ է ներս մտնել :

— Այո , միմիայն կիներուն :

— Արդարեւ տարօրինակ է . արդեօք այս
տեղի արուեստագէտ կիներն բուռն ատե-
լութեամբ կը վերաբերուին դէպի արական
սեռը :

— Նրբէք , այլ ուրիշ պատճառներ կան :
Արուեստագէտ կանանց ընկերութեան նը-
պատակն է մեր դեղարուեստից դպրոցներն
յաճախող մանկամարդուհիները կրթել փո-
խադարձ բարեկամութեան եւ բարուց սըր-
բութեան մէջ . իսկ խառն շրջանակաց մէջ
բոլորովին դոյութիւն չունին այս երկու
պայմաններն . առ այս յոյժ անհրաժեշտ է
կանանց այս ընկերութիւնը :

Անհամբեր կ'սպասէի այն երեկոյեան երբ
երկրորդ անգամ ներկայ պիտի դառնուէի
Միւնիխի արուեստագէտ կանանց շրջանա-
կաց մէջ : Սակայն չուտով եռանդս մարե-
ցաւ երբ կողմնակի կերպով այլ եւ այլ լու-
րեր հասան ականջիս «որոշեալ օրուան» վրայ :
Պատրաստ էի բաղմաթիւ այցելութիւններ
ընել . չառ տուներէ կը հրաւիրէին զիս եւ
ամենուրեք արուեստագէտ կանանց եւ նո-
ցա ժողովներու մասին կը խօսէին : Այրերը
մանաւանդ . կ'այպանէին զանոնք :

— «Որոշեալ օր» , հը՛մ , ըսաւ հեգնական
չարժումներ ընելով պարոն մը , որ ըստ ե-
րեւութին արուեստագէտի կը նմանէր :

— Ձեր հը՛մով ի՞նչ ըսել կ'ուզէք , հար-
ցուցի :

— Հը՛մ , կրկնեց դարձեալ դէմքի խորա-
մանկ արտայայտութեամբ , առանց խօսքիս
պատասխանելու :

Ահա ուրիշ պարոն մ'ալ տարօրէն իմն
ժպտելով , դարձաւ ինձ օտարօտի հարցով
թէ կը ծխեմ :

— Ոչ , պատասխանեցի , զարմացած այս
խօսքերէն :

— Հը՛մ , ըսաւ նորէն արուեստագէտը ,
եթէ այդպէս է , աննշան դեր մը պիտի
խաղաք «որոշեալ օրուան» մէջ :

Վախցայ . սարսափելի կ'ատեմ կ'ին մը
որ կը ծխէ :

— Կ'ուզէք ըսել թէ «որոշեալ օրը» բո-
լոր կանայք կը ծխեն , հարցուցի անհան-
դիստ սրտով :

— Անտարակոյս , այո , ամենքը , ամեն-
քը կը ծխեն , յարեց բրոֆէսէօր մը , եւ եթէ
կը կասկածիք ըսածիս , դացէք մեր արուես-

տադէտ կանանց գինեւորուն, ուր ծուխն ամպի պէս կը պատէ ամեն ուրեք:

«Գինեւորուն», որքան խորթ կը հնչէ ականջիս այս բառը. «Եւ թէ ստիպեն զիս ծխելու», կը խորհէի երկիւղով: Սակայն իմ շրթունքներս ծխախոտի մօտեցած չեն երբէք:

— Հըմ, յարեց վերստին արուեստագէտն, «որոշեալ օրն» ազատութիւն կը տիրէ, լիակատար ազատութիւն կը տիրէ, լիակատար ազատութիւն:

— Իսկ կանոնաւոր կերպով խմել դիտէ՞ք, ըսաւ ինձ նոր պարոն մը. այս արուեստը «որոշեալ օրուան» մէջ պարտաւորիչ է գիտնալ:

Մարտիեցայ, եւ չկարողացայ խօսք մ'իսկ արասանել:

— Միթէ խմելը պարտաւորիչ է, հարցուցի անհաւատ կերպով:

— Հըմ, ըսաւ արուեստագէտն իւր հեզնական ժպիտով, անտարակոյս:

Մէկն ալ խիստ դիտողութիւն մ'ըրաւ.

— Եթէ ոստիկանապետ լինէի, ըսաւ, ուղղակի կը ցրուէի այս արուեստագէտ կիներու ընկերութիւնը. խորապէս համոզուած եմ որ այս կիներ յեղափոխականներ եւ ոչնչականներ են որք անխլխանական նպատակներու կը նկրտին:

Քաղաքական խնդիրներով զբաղած չեմ ամենեւին, լրագրաց մէջ թերթօնները կ'ընթեռնում մասնաւորապէս, այնուամենայնիւ ոչնչականաց ծրագիրներն յոյժ պարզ ու հասկանալի են ինձ: Մտացս մէջ խորհուրդ մը ծաղեցաւ, — բաժնուիլ: Յիրաւի «որոշեալ օրուան» անդամներն անխլխանական եւ ոչնչական կիներ կարող են լինել: Տիկին Ք. Ի եւս հաւատալ դժուար է, որովհետեւ քիչ կը ճանչեմ գայն եւ շատ ժամանակ չըներ որ պատահաբար ծանօթացայ նորա հետ հանրային ջուրերն: Աստուած գիտէ, թերեւս նա ալ անոնցմէ է:

Վճռեցի չերթալ ժողովին, եւ որոշեալ օրը մէկդի նետելով արտիս փոքրողութիւնը, յարգական մերժողական պատասխան մը գրեցի բարեկամուհւոյս. «Կաղաչեմ ձեզ, ըստ որում խիստ յոգնած եմ, ուստի անկարող եմ վայելել ձեր սիրալիր առաջարկութիւնը»: Բայց նամակս ուղարկելէս ի վեր տակաւին չորս ժամ անցած չէր, երբ

տիկին Ք. անսպասելի կերպով երեւցաւ սենեկիս մէջ:

— Ի՛նչ, դոչեց բարեկամուհւոյս, դուք կը փախաբիք տո՞ւնը մնալ. կ'ուզէք ձեռքէ թողո՞ւլ «որոշեալ օրը». երբէք, երբէք թոյլ չեմ տար:

— Այսօր ազգային թանգարանը դացած էի, այս պատճառաւ խիստ յոգնած եմ, պատասխանեցի յուզեալ:

— Ո եւ է պատճառաբանութիւն, չեմ ընդունիր բնաւ: Արուեստագիտուհեաց խոստացայ ձեզ անդ տանիլ, անշուշտ կենդանի կամ մեռած, յարեց ուրախ ժպտելով: Պարտաւոր էք դալ: Այնտեղ շատոնց կը մոռնաք ձեր յոգնութիւնը: Մի՛ մերժէք, եւ երախտապարտ կացուցէք մեզ ձեր ներկայութեամբ, ըսաւ աղաչական եղանակաւ մը:

Այլ եւս չը կարողացայ ընդդիմանալ, եւ սրտիս խռովութիւնը զսպելով տիկին Ք. հետ մեկնեցայ:

Դահլիճը մտնելով, երկիւղախառն եւ անվստահ ակնարկ մը նետեցի շուրջս. . . որպիսի ակնահաճոյ տեսարան. գինեւոր փոխարէն գեղեցիկ, չքեղօրէն լուսաւորուած դահլիճ մը կը բացուէր առջեւս, ուր մօտ վաթսուս կիներ: Օդն աւելի մաքուր էր. տիկիներէն եւ ո՛չ մին, մինչեւ անգամ կարմիր վառարանն չէր մխար: Սակայն մէկ ճշգրիտ կանխասացութիւն արդարացի երեւցաւ. գարեջուրի գեղեցիկ բաժակներ դրուած էին ամենուն եւ նոյն իսկ իմ առջեւ, թէեւ երբէք խնդրած չէի ո եւ բաժակ:

Իմ յուզումն որ հանգչած էր առ սակաւ, նորէն վերսկսաւ: Սկսայ կասկածիլ թէ ճշմարիտ էին ինձ պատմութեանքն. այսպէս, օրինակի համար, այն սեղան որոյ մի ծայրէն աղմուկը կը լսուէր եւ ոյր առջեւ նստած էին յանձնախմբի քանի մը անդամներն եւ ոմանք ալ կանգած էին, կը կարծէի թէ քաղաքական խնդրոց վիճաբանութեան կեդրոնն է հաւանօրէն:

Քանի մը բոպէէ յետոյ ամեն ոք նստաւ պայտածեւ սեղանին բոլորաթիւր: Յետոյ վըտանդաւոր անկիւնէն ձայն մը հնչեց.

— Տիկիներէն կը խնդրուի իրենց վճարումներն ընել:

— Ստակ ունի՞ք, հարցուց քովս նստող կին մը իւր խօսակցին:

Ապշած եւ յուզուած էի, որովհետեւ ամենեւին դրամ առած չէի հետս: Ակամայ դարձայ տիկին Ք.ի աղաչական հայեացքով եւ ըսի թէ ամենեւին դրամ չունիմ քովս:

— Դուք չը պիտի վճարէք, այլ ընկերութեան անդամները միայն վճարելու պարտաւոր են:

Նորէն սկսայ ազատօրէն շնչել. քիչ յետոյ զանգակն հնչեցուցին: Ամեն ոք լռեց: Կին մ'ելաւ տեղէն... իմ սիրտս սաստիկ կը բաբախէր. կը նախազգայի թէ ահա շուտով կ'սկսի յեղափոխութեան ճառը — ճառ կիներու ընդդէմ արանց մղուած պատերազմի մասին, ընդդէմ պետութեան եւ եւ. բայց ի՞նչ կը լսեմ. ատենաբանուհին կը խօսի... Միթէ ճիշդ չէ՞ լրածս... Այո, ձայնը զիս չը խաբեր... Նա կը ճառէ Էմիլի արուեստագիտութեան եւ նորա գիւտն ընող Բալիսի վրայ հետաքրքրաշարժ եւ գրաւիչ ոճով:

Ճառը վերջացաւ, եւ վերսկսաւ նախկին ուրախ խօսակցութիւնն որ ժամանակ առ ժամանակ բարձր քրքիջներէ եւ դարեջուրի բաժակաց բաղխիւնէն կ'ընդհատուէր: Մեքենաբար վերուցի բաժակս... բայց ի՞նչ էր մէջինը... հա՛, հա՛, հա՛... փոխանակ արբեցուցիչ դարեջուրի, սուրճ գտայ:

Անցայ. խիղճս կը պախարակէր զիս թեթեւամտութեանս համար, որով հաւատ ընծայած էի մարդոց չարանենդ դատողութեանց եւ բամբասանաց, մարդոց՝ որք կը ճգնին սեւ գոյներով ներկայացնել այն իրերն եւ նպատակներն որոց անտեղեակ են բոլորովին: Այնուհետեւ ծայրայեղ հետաքրքրութեամբ եւ խորին ուշադրութեամբ սկսայ հետեւիլ այն ամեն բանի որ կը կատարուէր Բէնեֆան մէջ: Ուշի ուշով կը դիտէի արուեստագէտ կիներու նորանոր գիւտերն ու արտադրած ընտիր գործերը: Կը լսէի «որոշեալ օրուան» մասնախմբի իւր անդամներուն ուղղած բաղմաթիւ ծանուցումներն եւ յայտարարութիւններն ի մասին ընկերութեան բարեօրման եւ զարգացման եւ եւ:

«Գործերը» վերջացած էին: Ապա սկսաւ երեկոյեան ծրագրի միւս մասն, դրօսանքը. մի արուեստագիտուհի որ նկարչութեան եւ երաժշտութեան մէջ ընտիր եւ հիմնապի էր հաւասարապէս, սկսաւ երգել. յետոյ հընչեցին նուագարաններն եւ արուեստագիտութեան փոքրիկ քրմուհիներն ուրախ պըլաւթ վալսել սկսան:

ԶԱՆԱԶԱՆՔ

ԻՄԱՃ ՈՍՏՈՒՄ ՄԸ
ՊՐՈՒՔԼԻՆԻ ԿԱՄՈՒՐՋԵՆ

ՆՈՒ-ԵՈՒՐՔ. մայիս 22,

Ընթերցողք կը յիշեն անշուշտ այն կախաղանաւոր կամուրջը որ շուրջ երկու տարի առաջ աւարտեցաւ, եւ որ Նիւ-Եորք եւ Պրուքլին քաղաքներն իրար կը միացնէ: Այս կամուրջ աշխարհիս վրայ գտնուող ամենէն բարձրն է: Կամուրջին ճիշդ մէջ տեղը, որու տակէն Ովկիանոսի ամենաբարձր շողեհաւները կ'անցնին, 140 ոտք բարձրութիւն ունի: Լողալու վարժապետ Պ. Օտլըմ Վալինկիթոնէ Նիւ-Եորք եկաւ երկու օր առաջ այս ահագին բարձրութենէն գետին մէջ ոստում մը ընելու: Յառաջագոյն Սամ Բալ անուամբ անձ մը 116 ոտք բարձրութենէ մը ծովը նետուած էր ձէննէսի գետին մէջ եւ ողջ դուրս ելած: Ասի իրեն ջաջալերութիւն կուտար. բայց երբ յիշեցուցին թէ ուրիշ անգամ մը եւս փորձած էր այն անձն եւ այն ժամը իւր կենաց վերջին ժամն եղած էր, պատասխանեց թէ «նա այնքան փորձած էր որ անխոյժ գտնուեցաւ այդ անգամուն իւր հաւասարակշռութիւնը պահելու մէջ եւ որով մեռաւ»: Զրօսանաւի մը նաւապետը, Պոլթըն անուամբ, Նիւ-Եորք հասնելուն հիւրընկալեց զինքը, զՕտլըմ, եւ խօսակցութեան միջոցին ըսաւ թէ չի յանդգնի այդ փորձը ընել, որուն պատասխանեց. «Պարտաւ բան է՝ զիս համոզել այդ նպատակէս ետ կեցնելու համար. այնչափ ապահով եմ թէ առանց վտանգի կրնամ կատարել, որչափ որ գիտեմ թէ կ'ապրիմ: Ամեն ոք կ'ըսէ թէ՛ «մի ըներ», եւ եթէ չընեմ, միեւնոյն մարդիկ պիտի ըսեն թէ տկարացայ: Ամբողջ ունեցածնիդ կրնաք ի դրաւ դնել թէ ողջամբ դուրս պիտի գամ շուրին մէջէն»:

Կամուրջը հսկող ոստիկանները արդէն իմացած էին թէ մարդ մը ծովը պիտի նետուի կամուրջէն եւ առաջն առնելու համար մեծ թուով ոստիկաններ անդ կը շրջադայէին: Կամուրջը այնպէս շինուած է

որ ճիշդ մէջ տեղը հետիոտն անցորդաց, անոր երկու կողմերը չողակառքով անցորդաց եւ ասոնց երկու կողմերը (կամուրջին երկու վերջին կողմերը) կառքով անցորդաց համար է: Ուրեմն պէտք էր որ կառքով երթային կամուրջին մի կողմը, որպէս զի կարող ըլլար ապաստութեամբ ծովը նետուիլ: Արդէն խմացած ըլլալով թէ ոստիկանութիւնը լուրջ հսկողութիւն մը կ'ընէ կամուրջին վրայ, միջոց մը մտածել պէտք եղաւ նոցա ձեռքէն ազատելու համար: Եւ ահա ինչպէս: Երկու կառք բռնեցին մին անցորդի եւ միւսն ապրանք փոխադրելու. անցորդի կառքին մէջ նստաւ մին իւր բարեկամներէն, իսկ ապրանքայ կառքին մէջ նստաւ Օտլըմ: Անցորդի կառքն երբ կամուրջին մէջ տեղը հասաւ, այդ բարեկամը սկսաւ հանուիլ իւր հագուստներէն եւ երբ ոստիկանք տեսան զայս, ամբողջը մէկանց իւր քով վազեցին եւ սկսան հարցումներ ընել որո՞ւ պատասխանեց թէ «ձեզ ի՞նչ փոյթ, միթէ ազատ չե՞մ ուզածս ընել, թողէք զիս, ես ծովը նետուիլ կ'ուզեմ եւ»: Յորժամ ոստիկան այս մարդուն շուրջը բոլորած էին, եւ զինքը ձերբակալելու գործողութեամբ կ'աշխատէին, միւս կողմէն արդէն ամեն կերպով պատրաստ գտնուող Օտլըմ, իւր կառքէն վար իջնելով, ելաւ կամուրջին վանդակներուն վրայ եւ սկսաւ դիտել այն ահագին խորութիւնը որ իւր ներքեւ կը գտնուէր. թէեւ չի շփոթեցաւ, բայց իւր դէմքը բոլորովին մեռելադոյն կերպարանք մ'առած էր. ինքը բարձրահասակ եւ բաւական դիւրուկ մարդ մ'էր: Նաւապետ Պոյթըն իւր նաւով եկած էր եւ ճիշդ կամուրջին մէջ տեղը գետին վրայ կեցած էր, «Եւր մեծ բազմութիւն մը կար հանդիսականաց, նաեւ պատրաստ լուզորդ մը: Այս միջոցիս կամուրջին վրայ գտնուող անցորդները եւ գետին երկու կողմը գտնուողը, ապաւն եւ բոլորովին այլալան, զՕտլըմ կը դիտէին: Կամուրջին ներքեւէն չոգենաւ մը անցաւ նոյն պահուն, որո՞ւ անցորդը եւս սկսան վեր նայիլ հաստատամիտն Օտլըմի վրայ: Երբ այս չոգենաւ անցաւ, Օտլըմ իւր ոտքերը իրարու քով սերտիւ կցեց եւ ձեռքերը ուղիղ վար դարձուց իւր կողերուն կցելով, եւ ահա օդին մէջ նետուեցաւ: Ճիշ մ'էր ելաւ հանդիսականաց մէջ ամեն կողմէ. նա-

ւապետ Պոյթըն միայն հանդարտ էր եւ ժամացոյց ի ձեռին կը դիտէր թէ ո՞րչափ ատենէն ջուրին երեսը պիտի հասնի. երեք եւ մէկ քառորդ երկվայրկեան տեւեց այս: Առաջին 100 ոտքը բոլորովին ուղիղ կեդրոնաձիգ դիրքի մէջ եղաւ, բայց յետոյ կորոյս իւր հաւասարակշռութիւնը քիչ մը եւ ի զուր ջանաց ձեռքերովը ուղիղ դիրք մը առնելու: Մասամբ կողմնակի իջաւ ջուրին մէջ: Որոտակից գոչում մը ելաւ ջուրէն եւ քսան ոտք բարձրութեամբ վեր ցատկեց ջուրը: Քանի մը վայրկեան ջուրին երեսը ոչինչ երեւցաւ: Շոգենաւուն մէջ պատրաստ գտնուող լուզորդը շուարած բոլորտիքը կը նայէր, երբ նաւապետ Պոյթըն ջուրին երեսը կարմիր նշան մը տեսնելով խմացաւ թէ Օտլըմի չափին էր այն, որ անկման սաստկութենէն կտոր կտոր եղած էր: Նաւապետը առանց իւր հանդերձները հանելու խկոյն ծովը նետուեցաւ եւ 30 ոտք հեռու գտնուող Օտլըմի հասնելով զանի իւր աջ բազուկին տակ առնելով լողաց դէպ ի փոքրիկ նաւակ մը որ ի պատրաստի էր: Բաւական աշխատեցան զինքը զգայնութեան բերելու. քիչ յետոյ աչքերը մասամբ բացաւ եւ սա վերջին խօսակցութիւնը տեղի ունեցաւ.

« Լաւ, ի՞նչպէս գտաք ոստունս »:

« Սքանչելի » պատասխանեց նաւապետը:

« Շատ վնասուած ե՞մ »:

« Ոչ երբէք, պատասխանեց Պոյթըն, քաջութիւնդ մի կորսնցներ: Բոլորովին աղէկնաս պիտի քիչ յետոյ »:

« Գիտեմ թէ աղէկնալու եմ » ըսաւ աւելի տկար ձայնով մը:

Անկման սաստկութենէն եւ մանաւանդ քիչ մը կողմնակի դիրքի մէջ ինկած ըլլալէն ներքին գործարանաց մէկ մասը բոլորովին ջախջախուեր էր եւ որով մինչ չոգենաւ եղբրը հասաւ, ինքը մեռած էր: Իւր ընկերները, մանաւանդ այն բարեկամը որ ոստիկանները խօսքի բռնած էր կեղծ ներկայացում մ'ընելով, ձերբակալուած են արդէն եւ պիտի դատուին: Օտլըմ լսած էր թէ ինք այս ոստմամբ կը փախաբի հաստատել, որպէս արդէն շատ անգամ պնդած է, թէ մարդ չի մեռնիր օդին մէջ վար ինկած ատեն որ եւ է բարձրութենէ մը, եւ

որով քաջաւերութիւն պիտի ըլլայ այն ան-
ձանց որք հրդեհի միջոցին բարձր տան մը
վերնայարկէն չեն համարձակիր իրենք զիրենք
վար նետել ուռկանի մը մէջ, կարծելով թէ
անպատճառ պիտի մեռնին: — Ձենք դի-
տեր թէ իւր փախաքին հասա՞ւ թէ ոչ:

ՀԱՅՐ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ԵԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՔ⁽¹⁾

Գաւառաց մէջ նիւթական անձկութիւն
կը տիրէ աւելի այն տեղեր որոց ժողովուրդ-
ները գլխաւորապէս Կ. Պոլիս պանդխտու-
թեամբ կը շահէին, զի այդ վաստակն այժմ
խիստ դադարած լինելով աւելի տուած է
նեղութեան, որոյ դարման չեն կրնար գըտ-
նել չունենալով այլ միջոց վաստակի: Իսկ
պանդխտութեան վաստակին նուազ ծանօթ
եղող գաւառաց մէջ տնտեսական տագնապն
բաղդատաբար նուազ է քան առաջնոյն:

— Տաւրոսի կուսակալութեան կեդրոնա-
վայր Գօզաթ գիւղաքաղաքէն 2½ ժամ ընդ-
արեւելեան հարաւ Նրկան գիւղին մօտ ե-
կեղեցւոյ մը աւերակ կայ, որ հին ճարտա-
բապետութեան սքանչելի մի հրաշակերտ
կրնայ համարուիլ եւ խիստ շատ նմանու-
թիւն ունի Անիի ամենագեղեցիկ սրբա-
տեղեաց չնքերուն: Արեւելեան պատն աւ-
բողջ կանգուն է, հիւսիսային եւ հարաւա-
յինն ալ մասամբ մը: Ձախ խորանին վերեւ
հայերէն արձանագրութիւն ունի երկաթա-
գիր տառերով. դժբաղդաբար շատ բարձր
լինելուն չկրցայ կարդալ. սանդուխ ալ ձեռք
ձգել կարելի չէր: Այդ եկեղեցւոյն որմերու
մանաւանդ արտաքին քարերն այնպէս նըր-
բաձաչակ քանդակներ կը պարունակեն որ
կ'արժէ մասնաւորապէս տիպար ընտրել
նախնի ճարտարապետութեանց վրայ դա-
ղափար ստանալու համար:

— Չարսանձագի մէջ Ձորաչ եւ Լափ գիւ-
ղերուն բով գերեզմանատուններ կան որոց
մէն մի դամբարանը կը կրէ իւր վրայ տա-

պանաքար, քանդակեալ զանազան պատկեր
ներով. գործընտէր, ոչխար, ձի, խոյ, ար-
ուեստական գործիքներ, զինուոց նկարներ,
հեծելութեան նշաններ: Թուական եւ գիր
չկայ բնաւ: Պատկերաց քանդակմունքն ան-
շուշտ նշանակութիւն ունին, ինչպէս Եգիպ-
տացւոց մէջ նկարէն նշանագիրը: Բայց մի-
թէ կրնա՞նք ենթադրել որ երբեմն այդ
կողմի բնակչաց մէջ կենդանեաց եւ այլ ի-
րաց պատկերները կը գործածուէին իւր
բառեր խմատներու բացատրութեան հա-
մար ինչպէս ի հնումն Եգիպտացւոց մէջ,
յորս բազէն կը նշանակէր Աստուած, ձուկն
ատելութիւն, եւ:

— Մշոյ Ս. Յովհաննէս վանքին մէջ սրբա-
զան շիշ մը կայ ասպակեայ, որ ըստ տեղւոյն
միաբանութեան կարծեաց եւ տիրող աւան-
դութեանց, նոյն այն շիշն է որոյ մէջի իւղով
Սափուէլ օծեց զԴաւիթ, Ղեւտացիք զԱհա-
րոն, եւ մեղաւոր կինն զՅիսուս: Այդ շիշն
ունի այնպիսի միայրագար ձեւ ու կազ-
մութիւն որ ասպակիի շինութեան արուես-
տին դեռ արդի զարգացեալ վիճակ չունե-
ցող դարու մը գործ լինելն հաւանական է:
Բայց թէ նոյն է ընդ նշանակեալ շիշերուն,
հաստատ ասպացոյց չկայ: Վանքին միաբան-
ներն կը պահեն զայն իւր սուրբ նշխար
կամ մասունք:

— Դարձեալ այդ վանքին մէջ մեծ խնա-
մով պահուած կայ վանքին հողերու կալ-
ուածագիր եղող մի հրովարտակ, ոյր հա-
մար կ'ըսեն թէ Արաբացւոց Գ. Ամիրա-
պետի, Էօմէրի, ըստ ոմանց Ալիի կողմանէ
տրուած է: Շրջակայ Մահմետականք մեծ
յարդանքով կը վերաբերուին դէպ ի այդ
գրութիւն որ հին արաբական գրուած մ'է
չառ դժուարընթեռնելի եւ զրեթէ խըրթ-
նութեամբն անհասկանալի:

— Մշոյ եւ Առաքելոց վանքն ալ ուրիշ
կարեւոր հնութիւն մ'ունի: Տաճարին երկ-
փեղի դռուն, զուտ եփենոս, Հայոց ՇՁԳ
(583) թուականի, այն է 751 տարուան գործ
է. ունի իւր վրայ փորագրեալ կամ քան-
դակեալ զանազան պատկերք մարդոց հե-
տաքրքրական տարազներով, գլխարկներով
եւ զէնքերով, որք կը կարծուին լինել օրի-
նակ Հայոց զօրավարաց եւ զինուորաց ըստ
նախնի ձուռց զգեստի եւ զինուոց: Փորա-
գրուած են նաեւ այլ եւ այլ թռչնոց պատ-

(1) Իմ «Ճանապարհորդական յիշատակարան»էն
քաղուած:

կերներ: Այս ճարտարապէն դուռը կ'արժէ մեծ խնամով պահել իբր գեղեցիկ յիշատակարան ազգային հնութեանց:

— Գաւառաց մէջ վազող դետերէն գլորեթէ մեծ մասը անողուտ է, չըջակայ հողերուն զլանալով ոռոգել զանոնք, զի ցամաքի մակերեւոյթէն չատ խորութեամբ կ'ընթանան: Գծբաղդաբար տեղացիք արուեստական ո եւ է միջոց չեն բանեցուցած օգտուելու համար բնութեան այն մեծ պարգեւներէն, յորոց եթէ կարենային ջուր վերցնել իրենց արտերուն վրայ, նոցա տընտեսական վիճակն յոյժ մեծ տարբերութիւն կ'ունենար քան զարդիս: Եւ միթէ չա՞տ դժուար կամ անհնար բան է անուաւոր մեքենաներ հաստատել կարեւոր տեղեր եւ անոնց միջոցաւ ջուր վերցնել չըջակայ հողերուն ոռոգման համար:

— Ի Մուշ եւ ի Կողմանս Բարբերդու թոնիրներն կը շինեն երկրորդ յարկի վրայ երբեմն, իսկ ի Վասպուրական անպատճառ առաջին յարկի մէջ, այն է գետնի վրայ: Առաջին պարագային մէջ առ կախ կը մընայ թոնիրը վերէն վար, բայց պատուանդանի վրայ հաստատուած: Ի Մուշ եւ ի Վասպուրական ընտանի սուրբ կենդանեաց աղբը չորցունելով վառելու սովորութիւնն կը արիւնջ դեռ, բայց անտառուտ դաւառաց մէջ չէ սկսած բնաւ այդ սովորութիւնն, զորօրինակ Տաւրոսի չըջակայքը: — Այդ ապականութիւնները վառելու դէշհետեւանքներէ մի է թոնիրի աշխատաւոր կանանց խիստ յաճախական աչացաւութիւնն, ոմանց ալ կուրանալու վտանգը:

— Ի Քլի եւ ինչ ինչ տեղեր խաղողի որթատունկը եւ հաւկիթի կեղեւը չեն վառեր, վախճալով թէ այդ ին խաղող չտար եւ հաւն ալ ձու չածեր:

— Գիւղերու մէջ գրեթէ յամենայն դաւառս միեւնոյն սենեկի մէջ կը պառկին քանի մը զոյգ ամուսինք միանգամայն: Այս Կիւնիսի փրկիսոփայութեան արժանավայել ազատամտութիւնն ոչ ուրեք կը տեսնուի քաղաքաց մէջ:

— Բոլոր գիւղերու մէջ եւ ամեն տեղ աղջիկները մեծ փոխարինութիւն կ'ստանան փեսայէն, իսկ քաղաքաց մէջ ընդհակառակն փեսայք իրաւունք ստացած են օժիտ պահանջել հարսներէն. այս սովորու-

թեան իբր արդիւնք գիւղացւոց մէջ երիտասարդաց, իսկ քաղաքաց մէջ օրիորդաց դժուարացած է ամուսին գտնել, մանաւանդ աղքատաց: Ի փոխարէն այսմ, գիւղացիք առեւանգութեամբ, քաղաքացիք անխոստովանելի միջոցներով պարտաւորուած են բնական պահանջը կատարել: Եթէ վերցուէր գիւղացւոց հաւն (այդ է անուն աղջկան մը համար փեսայէն պահանջուած դրամածիտի) եւ քաղաքացւոց ճէհէլ (հարսի մը հօր տունէն հետ տանելիք օժիտը), բարոյական խիստ չատ զեղծմունք պիտի վերջանային եւ ամուսնութիւնք կ'ազատէին արդի դժուարութիւններէն: Գիւղացի օրիորդաց կամ կանանց երբեմնակի կրօնափոխութիւնք մի միայն ամուսնական դժուարութեանց հետեւանքներ են եւ երբէք կրօնական համոզմանց փոփոխութեան:

— Գաւառաց մէջ տեղ տեղ հարանց քան կը կոչուի հարսի հօր տունը, ինչպէս ի Վասպուրական, ուր Խերանց կը հնչեն այդ բառն, եւ տեղ տեղ հարանց քան, զորօրինակ ի Գ. հայս եւ: Իւրաքանչիւրն որ այդպէս կը գործածէ, անհնար է որ երկուքն ալ միասին գործածէ:

— Ան տեղեր ուր այրի կանայք չատ դժբաղդ կը լինին վերստին ամուսնանալու կարի մեծ դժուարութեան մէջ իյնալով կամ քիչ յոյս ունենալով, իսկ ընդհակառակն ի Բալու խիստ յարգի են այրի կանայք եւ մեծ արժէք ունին: Իրենց փեսայէն ստանալիք դրամածիտն ալ բաղդատմամբ քան օրիորդաց աւելի չատ է միշտ: Ուր որ սովորական եղած չէ այրի ընդ կուսի ամուսնացնել, անդ այրիք այնչափ դժբաղդ չեն ըլլար: Հակառակ պարագային մէջ եղող երկիրներու այրի կանայք յոյժ դժբաղդ են:

— Գիւղացի այրեր այնչափ սովոր են հայհոյել իրենց կանայքը, երբեմն ալ ծեծել, որ այդ արարողութիւնները կամ վարմունքը սիրոյ կամ մտերմութեան նշան համարուելու երեւոյթ ունին գրեթէ: չը հայհոյելու մերթ ալ չը ծեծել, կնոջ հետ համարձակ չ'ըլլալ ըսել է:

— Հետեւեալ անուններն հետեւեալ դաւառաց մէջ խիստ չատ սովորական են: Մեսրոբ ի Բալու, Խաչեր (Խաչատուրի ազաւաղումն) եւ Պետրոս ի Քլի: Մամաս

յԱրաբկիր, Յովհաննէս ի Կարին, Կարիս-
ճան եւ Մղաճան ի Բաղէշ, Նշան յԱկն,
Ղազար ի Զմէկածաղ, Յովհաննէս, Մկրտիչ
եւ Կարապետ ու Գրիգոր ի Վան եւ: Իսկ
նորածին տղայք, որու կամ էգ, գրեթէ բո-
լոր քաղաքներու մէջ (ոչ նաեւ ի գիւղո-
րայս) մեծ մասամբ հայկական անուններ
սկսած են կրել:

— Տենդի (تندى) գրեթէ յատուկ բնա-
կարաններ են Վանայ Աւանց գիւղը, Բա-
լու քաղաքը, Զարսանճաղի Բերրի գիւղա-
քաղաքը, եւ Կապան-Մատեն գիւղաքաղաքն
առաւել քան զամենեւին: Տենդոտ է յամ-
րան նաեւ Երիզա, ուր աշացաւն ալ մեծ
ծաւալում ունի ընդհանրապէս Սոքա մեծաւ
մասամբ կարող են ջնջել տենդ պատճա-
ռող աղբիւրներն, որք միայն օդ ու ջուրը
չեն, եթէ գիտնան սակայն: Օրինակ, Վա-
նայ Աւանց գիւղի տենդի պատճառն է
ծովու քով եղող ճահիճն, եւ Երիզային՝
Եփրատայ մերձաւոր ճախիններն, զորս ար-
ուեստական միջոցներով կարելի է ցամքեցը-
նել: Այսպէս նաեւ միւսներն ալ մէկմէկ զիւ-
րաբառնալի պատճառներ ունին:

ՄԱՐԿՈՍ ՆԱԹԱՆԵԱՆ

Ք Ա Ղ Ո Ի Ա Յ

ՇԱՐԱԹԱԿԱՆ ԼՐԱՅ

25-31 ՄԱՅԻՍ 1885

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

Անգլիոյ Երեսփոխանական ժողովն յու-
նիս ցի գիշերային նստին մէջ կատարեց
Եւրոպայոցի երկրորդ ընթերցումն որ երկար
վիճաբանութեանց առիթ տուաւ: Հասու-
թից ճիւղն որ քուէի դրուեցաւ նախ, մեր-
ժուեցաւ 252ի դէմ 264 քուէով: Քուէար-
կութեան այս արդիւնքը պարտութիւն մ'է
Պ. Կլատտոնի նախարարութեան համար:

Այս քուէարկութեան վրայ, Պ. Կլատտո-
ն յայտարարեց Երեսփ. ժողովոյ մէջ թէ
Նախարարութիւնը պարտ համարած է Թա-
գուհւոյն զեկուցում մ'ընել, որոյ ինչ բնու-
թիւն ունենալը կրնայ ենթադրուիլ, այլ
որոյ վրայ ինք չկրնար խօսիլ: Թաղուհւոյն
որոշման սպասելով, Պ. Կլատտոն խնդրեց

որ ժողովն յետաձգէ իւր նիստեր մինչեւ
ուրբաթ: Յետաձգումն ընդունուեցաւ եւ
նիստը վերցաւ:

— Կ'երեւի թէ, այն պահուն որ Խոր-
հրդարանին մէկ հակառակ քուէն եկաւ
պարտութիւն մը կրել տալ Կլատտոնեան
դահլճին, այս դահլճ իւր մէջ իսկ բաժան-
եալ կը մնար տակաւին Իռլանտայի խընդ-
րոյն վրայ. զի Երեսփոխանաց ժողովոյն
վերջին ուրբաթ աւուր նստին մէջ, Պ. Կլ-
ատտոն, հակառակ ընդհանուր ակնկա-
լութեան, չուզեց ըսել թէ Նդեռնական
բացառիկ Օրէնքը պիտի պահուի՞ Իռլանտա-
յի մէջ թէ պիտի ջնջուի: Արմատականք եւ
Նախարարութեան արմատական անդամք
(Սըր Զարլզ Տիւք, Պ. Զէմպլըէյն եւ Պ. Դո-
լըֆֆըր) կը պահանջէին որ եթէ դատարանք
եւ ոստիկանութիւնը բացառիկ իշխանու-
թիւններ պիտի ունենան յիւլանտա, գոնէ
միւս կողմէ իռլանտացի ժողովրդին տրուի
«տեղային եւ գաւառային ընդարձակագոյն
ինքնօրինութիւն մը»:

— Թիէն-Ջինէ հեռագիր մը կը ծանու-
ցանէ թէ Ֆրանսայի եւ Զինաստանի միջեւ
հաշտութեան վերջնական դաշնագիրն ստո-
րագրուած է յունիս ցին:

— Օրինական ծրագիրն որ խորհրդա-
րանական ընտրութեանց համար «ցանկի
վրայ քուէարկութեան» դրութիւնը կը վե-
րահաստատէ, վերջապէս ընդունուեցաւ
Ֆրանսայի թէ՛ Երեսփոխանութեան եւ թէ՛
Երակոյտին կողմէ:

— Հռոմի աւանդաբանական ընկերու-
թիւնը անցեալ շաբթու Կապիտոլ գնա-
ցին Կարիսպալտի մահուան տարեդար-
ձը տօնելու եւ այս առթիւ գրգռիչ ցոյցեր
ըրին եւ աղաղակներ յարուցին: Ոստիկա-
նութիւնը գնոնք ցրուեց: Թափորին մի
մասն եւ եթ կրցաւ հասնիլ ի Կապիտոլ:
Հոն ցոյցի հեղինակները պսակներ դրին
մեծանուն հանգուցելոյն դամբանին վրայ,
եւ բոլորք բարձին ոստիկանութեան ըն-
թացքին դէմ: Բարեկարգութիւնը հաստա-
տեցաւ:

— Սպանիոյ այլ եւ այլ կողմերը քուերա-
յի դէպքեր կը պատահին:

— Բեդրսպուրկէ յունիս 7 թուով կը հե-
ռագրուի. «Ռուս իշխանութիւնը կրցած են
հաստատել թէ Տիֆլիսի շրջակայքը դեռե-

րող աւագակաց խումբերը զինեալ են Բիւսլոտի անդը հրացաններով: Թէ աւագակներն ուստի՞ց ձեռք բերած են այս հրացաններ, փափուկ խնդիր մ'եղած է, յիշելով թէ, Աֆղանստանի վէճին առթիւ, զրոյց տարածուած էր թէ Անգլիա Կաւկասիոյ ժողովուրդները զինած է, որպէս զի կարենան Ռուսիոյ դէմ ապստամբիլ:

— Ռուսիոյ հետ խնդիրը խաղաղապէս կարգադրելուն շնորհիւ, անգլ. կառավարութիւնն ստացած վեց միլիոն վարկին երկու միլիոնը վերադարձուցած է ազգին: Պաշտօնապէս յայտարարեցաւ Խորհրդարանին թէ զինուորական պատրաստութիւնը դադարած են:

— Դոկտոր Կոման, իւր առողջութեան քիչ մը բարւոյնէն օգուտ քաղելով, Բեդրսպուրի կը վերադառնայ Զարին շնորհակալութիւն յայտնելու վասն այն համակրանաց զոր Ն. Վեհափառութիւն ցուցուց իւր հիւանդութեան միջոցին: Բայց Դոկտոր Կոմանը չ'պիտի վերստանձնէ ներքին գործոց նախարարութիւնն, որուն ամենէն հաւանական յաջորդն է Պ. Օսթրովսքի, նախարար պետական կալուածոց: Բահէէնի Կոմանին խօսքը չ'լինիր այլևս:

— Կ. Պոլսէ կը հեռագրուի առ Քաթանարան Բաքէի թէ Օսմ. զօրքերն յաջողեցան սահմանագլխէն անդին մղել բոլոր Պուլլար հրոսախմբերն որք արշաւած էին ի Մակեդոնիա:

— Վիէնայէն յունիս 5 թուով կը հեռագրուի առ Քաթ. Հռչակաւոր Միրտիդերէնը Պիպ Տօտայի մայրն և քոյրերը խնդրեցին Շքոտրայի Փրանսական հիւպատոսին պաշտպանութիւնը: (Բրէնը Պիպ Տօտա ի վաղուց ձերբակալեալ է Օսմ. կառավարութեան կողմէ, թէև Վիէնական թերթեր կը կարծեն թէ փախած է ետքէն): Հիւպատոսն իւր բնակարան ընդունել է զանոնք, բայց Օսմ. իշխանութիւնը կը յայտարարեն թէ Պիպ Տօտայի կինը պարտէր ձերբակալուիլ, վասն զի իւր ազգականներէ մին զորդած էր սպաննել ուրիշ ազգական մը:

Ն Ե Ր Ք Ի Ն

Գոհութեամբ կը հրատարակենք թէ Վեհ. Սուլթանը բարեհաճեցաւ Միւթէ-մայիլի աստիճան շնորհել Օսմ. Կայս. Պանքայի թարգմանութեան Դիւանի պետ Սըվաճեան Կարասպետ Էֆէնտիին որ լրագրոյս Վարչական Խորհրդոյ Ատենապետն է:

Նոյնպէս Միւթէմայիլի աստիճան շնորհեց Բ. Դրան Իրաւագէտ Խորհրդականաց Դիւանին անդամ Ճիվանեան Նշան Էֆէնտիին որ ծանօթ է Ազգիս բանասիրաց, եւ նոյն Դիւանի անդամներէն Հրանտ Ապրօպէյին եւ Գուլուստեան Յովհաննէս պէյին:

Երրորդ կարգի Մէճիտիյէ պատուանշան տրուեցաւ Խզիլի կառավարական գլխաւոր երկրաչափ Սալանեան Գէորգ Էֆէնտիին:

— Երևոական նախարարութիւնն այս օրերս 15,000 ոսկւոյ փոխառութիւն մը կ'ընէ Օսմ. Կայս. Պանքայէն:

— Թաթէի մէջ հրատարակեալ նամակ մը կը յայտնէ թէ Կարոյ մէջ կազմակերպեալ դողերու մեծ ընկերութիւն մը երեւան ելեր է որ քսան տարիէ ի վեր կ'օժանդակէ եղեր այդ կողմերը տեղի ունեցած ասպատակութեանց:

— Պաշտօնական ազդ. մը կը ծանուցանէ թէ Նախարարաց Խորհրդոյ որոշմամբ եւ Վեհ. Սուլթանի վաւերացմամբ՝ դաւառաց մէջ ելմտական գործոց վարչութիւնն յառաջիկայ յունիսէն սկսեալ մասնաւորապէս յանձնուած է Տէֆթէրտարներուն որք ելմտական նախարարութեան տրամադրութեան ներքեւ կը գտնուին արդէն:

— Առողջապահական Խորհրդոյ որոշմամբ, Միջերկրականի Սպանիական եզերքներէն Օսմանեան ո՞ր եւ է նաւահանգիստ մը եկող նաւերը պարտին իրենց կանոնական քարանձինան մաքրել Ափրիկեան Տրիպոլոյ, Պէրութի կամ Քլադօմէնի կայարաններէն միոյն մէջ:

— Տիւշտիյէ վարժարանաց կրթական ծրագրին բարեփոխման համար կազմեալ Յանձնաժողովն յառաջագոյն որոշած էր Ֆրանսերէն լեզուի ուսուցումը վերցնել այդ վարժարաններէն: Սաաթէ կ'իմանայ այժմ թէ Կրթական նախարարութիւնը վաւերացուցած է սոյն որոշումն:

— Անցեալ շաբաթ գիշեր Պոլսոյ Ճիպալի կողմը սոսկալի հրդեհ մը պատահելով, տեւեց մինչեւ առաւօտ եւ մոխիր դարձուց 102 տուն, 93 խանութ, 3 մզկիթ, 2 զըպրոց եւ 2 խան: Վեհ. Սուլթանին հրամանաւ Յանձնաժողով մը կազմուած է նպաստ հանգանակելով տարաբաղդ հրկիզելոց օգնելու համար, որոց անմիջական պիտոյքներն հոգացուած են արդէն:

Ա Ձ Դ Ա Յ Ի Ն

Ազգ. Սահմանադրութեան 25րդ Տարեգարձն, որ տեղի ունեցաւ այս կիրակի օր Ազգ. Հիւանդանոցի պարտիզին մէջ, իւր փայլով ու շքեղութեամբ գերազանցեց նախորդ տարուան հանդէսն:

Հիւանդանոցն ու պարտէզը տօնական երեւոյթ մ'ազգեցած էին :

Կարգադիր Յանձնախմբին կողմէ վարձեալ շոգենաւն , Պէօյիւքտէրէէն մեկնելով եւ նշանաւոր նաւահանգիստներն հանդիպելով , բաւական թուով ազգայիներ բերած էր յեջտիգուի :

Ս. Փրկչի եկեղեցւոյն մէջ պատարագեց Գեր. Իզմիրլեան Սրբազան : Յաւարտ եկեղեցւոյն , Գեր. Իզմիրլեան Սրբազան , զգեստաւորեալ եւ դպիրներէ առաջնորդեալ , զնաց եկեղեցւոյ քովի հրապարակն , Անպաշտպան Աղջկանց Պատասխարանին դրան առջեւ , եւ անդ , ի ներկայութեան խուռն բաղմութեան , պարագային յարմար բարոյ մը խօսեցաւ :

Ժամը չորան էր , եւ հանդիսականք նըստած էին ի սեղան , երբ Ս. Պատրիարք Հայրը ներս մտաւ Իզմիրլեան Սրբազանի եւ բաղմութիւ վարդապետաց հետ . ժողովուրդըն յոտին ընդունեց զնոսա : Նոյն պահուն նուազածուաց խուռնին Որբանոցի աշակերտաց ձայնակցութեամբ , սկսաւ նուազել ազգային երգ մը նուիրեալ Ս. Պատրիարք Հօր : Բաղմականք ծափահարութեամբ պատասխանեցին :

Քիչ մը յետոյ , Ս. Պատրիարք Հայրը բաժակ առաջարկեց Վեհ. Սուրբանին կենաց : Ապա , իրարու ետեւէ բաժակները շարունակուեցան . Իզմիրլեան Սրբազան բաժակ առաջարկեց Ս. Պատրիարք Հօր , Ազգային ժողովոյ Ատենապետ Տիգրան էֆ. Յուսուֆեան բաժակ առաջարկեց Հիւանդանոցի հիմնադրաց՝ Պէդէեանի , Պալեանի , Տատեանի . Գուրգէն էֆէնտի բաժակ առաջարկեց Հիւանդանոցի հիմնադրաց՝ Օտեանի , Ռուսինեանի , Աղաթօնի , ի մեծարանս յիշատակաց անոնց որք ոչ եւս են և յարեւելատեւթիւն անոնց որք կ'ապրին տակաւին . Մէլքեան էֆէնտի բաժակ առաջարկեց Հիւանդանոցի Խնամակալութեան անդամոց , Յակոբեան , Կիւմիւշկէրտան , Էսսեան , Կիւլպէնկեան էֆէնտիներու : Ժողովուրդը ջերմազին ծափահարութիւններով կ'ընդունէր բոլոր այս բարեմաղթութիւնները :

Սեղանէն յետոյ , ժողովուրդը լցուեցաւ պարտէզն , մինչ Ս. Պատրիարքն եւ եկեղեցական Հարք՝ քիչ մը հանգիստ առնլու համար՝ Հոգարձութեան սրահն ելան :

Ժամը հինգուկէսին միջոցները Ս. Պատրիարք Հայրը ներս մտաւ պարտէզէն եւ իւր ուղեկիցներով զնաց նստիլ դալարադարձ բաղմոցի մը վրայ որ յատկապէս պատրաստուած էր : Քիչ յետոյ , ոտք ելնելով , Ս. Պատրիարք Հայրը սրտագին բարեմաղթութիւններ ըրաւ Օսմ. Մեծագոր Պետութեան որոյ շնորհիւ , ըսաւ , ազգը կը վայելէ իւր Սահմանադրութեան տարեդարձը կատարե-

լու իրաւունքն , աղօթեց երկնից որ երկար կեանք պարգեւէ մեր առատագութեան , մաղթեց երջանկութիւն Հայ ազգին , գոչելով « Կեցցէ՛ Հայ Ազգն » եւ աղաչեց որ Ստուած հոգեւոր եւ մարմնաւոր ուրախութեամբ լցուցէ զամենեւին : Ժողովուրդըն , որոտագին ծափահարութեամբ պատասխանելէ յետոյ , գոչեց « Կեցցէ՛ Ս. Պատրիարք Հայրը » :

Ս. Պատրիարք Հայրը քիչ վերջ կրկնեց իւր բարեմաղթութիւններ տաճկերէն լեզուաւ :

Նոյն պահուն , նուազածուաց խմբի մ'առաջնորդութեամբ հանդիսավայր մտան Նիկիոսիոյ իայէն եկած բաղմութիւ ազգայիներ . իրենց ներկայացուցիչը Ս. Պատրիարք Հօր ներկայեց Նիկիոսիոյացւոց համակրական ամենաջերմ գգացումները Ն. Սրբազնութեան ընտրութեան համար եւ իրենց զգայած բերկրութիւնն անձամբ դալով տօնելով Սահմանադրութեան 23րդ տարեդարձը . նոյնպէս Ս. Պատրիարք Հօր ներկայացան Նիկիոսիոյ Աքանաղեան ընկերութեան անդամները :

Այսպէս հանդէսը շարունակեցաւ մինչեւ երեկոյ : Անհնար է աստ թուել այն բաղմութիւնն , որ ամեն տարիներէ աւելի , կը ընուր պարտէզն եւ Հիւանդանոցի շրջակայքը :

Ժամ տաանին , Եջտի-Գուլէի ծովեզրէն կը մեկնէր Կարգադիր Յանձնախմբին կողմէ վարձեալ շոգենաւն , վերադարձնելով ուղեւորներն Վոսիորի գիւղերը : Տակաւ առ տակաւ կ'սկսէին մեկնիլ նաեւ հանդիսականք :

Ընդհանուր զուտ հասոյթն եղած է աւելի քան 200 ոսկի : Ծախսուած են կերակրոյ 600 տոմսակներ :

— Յունաց Ամեն. Պատրիարքն եւ Անդլիական , Ռուսական ու Սերայիական դեսպանք մեր Ազգ. Պատրիարքարանն եկան շաբթուս մէջ եւ շնորհաւորեցին Ամեն. Վեհապետեան Սրբազանի Պատրիարքական բարձր պաշտօնը :

— Ամեն. Խրիմեան Հայրիկ այս չորեքշաբթի օր մեկնած է Տապիզոնէն եւ այս իրիկուն կամ վաղն առաւօտ մայրաքաղաքս կ'սպասուի : Գաւառացի բաղում ազգայինք Մախուսէի ընկերութենէն շոգենաւ մը վարձած են Ն. Սրբազնութեան ընդ առաջ երթալու համար :

— Խառն ժողովն իւր չորեքշաբթի աւուր նստին մէջ զբաղեցաւ Մոյ առաջնորդական եւ Ս. Կարապետի վանահայրութեան խնդիրներովն , սակայն կարելի չ'իլնելով վերջնական որոշման մը յանդիլ , հարկ եղաւ Ս. Պատրիարք Հօր յանձնել , այս մասին հարկ եղած դիմումն ընկելու համար :

ՎԵՐՋԻՆ ԱՐԺԷԹՈՒՂԹՅՈՒՆ — ՎԵՐՋԻՆ ՇՐՋԱԲԵՐՈՒԹԻՒՆ

Նախարարական հրամանագրոց համաձայն, 1885 Յունիս 30-ին և Յունիս 10-ին տեղի պիտի ունենան, օրինաց պահանջած տմեն ձեւակերպութեամբ, ամսական մեծ վիճակահանութեանը



ԻՏԱԼԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹԵԱՆՑ

Արտօնեալ Արքայական հրովարտակօք (1866-68-69-70)
եւ առանձնապէս երաշխաւորեալ կալուածներով որք կը վերաբերին

ՊԱՐԻ, ՊԱՐԼԵԹԹԱ, ՄԻԼԱՆ, ՎԵՆԵՏԻԱ քաղաքաց

500 վիճակահանութեամբ, որով մարդ ապահովարար կրնայ մասնակցիլ

ԱՄԷՆ ԱՄԻՍ 1 ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

Անխախտելի կերպով որոշուած՝ արժէթղթոց վրայ յիշատակեալ թուականներուն, Արժէ-
թուղթ կը պարունակեն ամեն մեկնութիւն իտալերէն, ֆրանսերէն, գերմաներէն:

ԱՅՍ ՓՈԽԱՌՈՒԹԻՒՆՔ ԵՆ

ԱՇԽԱՐՀԻՍ ԱՄԵՆԷՆ ՇՍՀՈՒՈՐՆԵՐԸ, ԿՍՏԱՐԵԼԱԳՈՐԾԵԱԼՆԵՐԸ

ԳԻՐԹԷ 300,000 ԲԱԺԻՆՆԵՐ, ՀՆՁՈՒՆ ԴԻՍՄՈՎ

Որոց քանի մը բաժիններն են

2 ՄԻԼԻՈՆ 1 ՄԻԼԻՈՆ, 500,000

400,000, 300,000, 100,000, 50,000 ՖՐԱՆՔԻ

Միասին կազմելով

66 ՄԻԼԻՈՆ ՖՐԱՆՔ

որ հնչուն դրամով կը վճարուի շահողներուն, ամենամեծ խորհրդապահութեամբ:

Պարի և Պարլէթթայի արժէթղթոց թիւերն, որք արդէն քաշուած են, նորէն պիտի դուրս
սափորին մէջ կառավարական և գիւղապետական օրինաց հաստատած ձեւակերպութեանց հա-
մաձայն, այնպէս որ արժէթուղթ մը կրնայ քանի մ'անգամ ելնել մի և նոյն վիճակահանութեան
մէջ:

ԱՌ ՆՈՒԱԶՆ 60 ՖՐԱՆՔՆՈՅ ԲԱԺԻՆՈՎ ՄԸ ԱՌ ԱՌԱԽԵԼՆ 2 ՄԻԼԻՈՆ

Միայն որ, ՄԱՐԻ ԵՐԻՒՅՔ չկորսնցներ վճարեալ գումարն, որովհետեւ այդ գումար ամ-
բողջապէս կը վերակադմուտի, ի նկատ առնելով որ ամեն գնորդի համար երաշխաւորեալ է 290
Ֆրանքի վճարումն, այս է 60 Ֆրանք երաշխաւորեալ բաժինն համար, 230 Ֆրանք դնման գը-
նդին վերադարձման համար:

Բուն վերջնական արժէթուղթերն, ստորագրեալ և երաշխաւորեալ մասնաւորապէս ՊԱՐԻ,
ՊԱՐԼԵԹԹԱՅԻ, ՄԻԼԱՆԻ և ՎԵՆԵՏԻԱԻ իշխանութիւններէն, որոցմով մարդ կանոնաւորապէս
կը մասնակցի հինգ հարիւր վիճակահանութեանց (ամիսը մէկ անգամ), կը ծախուին 200 ՖՐ-
ԱՆՔԻ անդեղելի գնով:

Նոյն արժէթղթերը կը ծախուին նաեւ պայմանաժամաւոր վճարմամբ ի գին 290 Ֆրանքի
զոր հետեւեալ կերպիւ պէտք է վճարել. ՍՏՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՏԵՆ 15 ՖՐԱՆՔ ԵՒ ՄՆԱՅ-
ԵԱԼ 275 ՖՐԱՆՔը վճարելի է 5 տկան ֆրանքի 55 պայմանաժամերով, վճարելի սկսեալ Յու-
նիս 30 էն, ամեն ամսոյ առաջին շաբթուն մէջ:

Ստորագրութեան համար 15 Ֆրանք վճարելէ յետոյ, գնորդն անմիջապէս կը մասնակցի
յաջորդ ամեն վիճակահանութեանց, իբր թէ վճարած լինէր գումարն ողջոյն և միշտ կրնայ մէկ
կամ քանի մը վճարումներ կանխել:

Գնորդը ձրիաբար պիտի ստանան ֆրանսական մեծ վիճակահանութեան տոմսակներ, որոց-
մով մարդ կը մասնակցի 7 յոյժ կարեւոր վիճակահանութեանց (ամիսը մէկ անգամ), որոց
մէջ կ'ընեն


ԿԵՍ ՄԻԼԻՈՆԻ, 250,000, 100,000, 50,000, 25,000 ՖՐԱՆՔԻ ԲԱԺԻՆՆԵՐ

Զրիաբար կը զրկուի ելած թուոց ցանկը: Ի վճարումն կ'ընդունուի նաեւ Պանքառմներ, ո
և է ազգի ԹՂԹԱՏԱՐԱԿԱՆ ԴՐՈՇՄՆԵՐԻ:

Գումարը զրկել պատուիրագրով մինչև ց30 Յունիս առ « հանգուցեալ Մարիուսի ԲՐՈՁԷ
եղբարց Դրամատունն », ի ձէնովս (Իտալիա), Սէն-Ժորժ հրապարակ, 32:

ԼՈՅԹԸՆ ԵՒ ՉԻՍՆԵԼ **ՄԹԵՐԱՆՈՑ** **ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ** **ԳՈՐԾԵԱՑ**

ԳԻՒՐՔՅԻ ԳԱՌՈՒՍԸ, ՂԱԼԱԹԻԱ



«ՕՐԻԱՆ» Մականուանեալ հնձող մեքենայն երկու ձիով կը քաշուի և կը կռէ 300 օխա :

ԳԻՆ՝ 35 ՕՍՄ. ՈՍԿԻ Է

Մեքենային կատարելագործութիւնը երաշխաւորեալ է : Գնողըն երբ գոհ չիլինի, կրնայ ետ առնուի իւր ստակն :

302

ԿԱՐԵՒՈՐ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Ըստ բանի յաճախորդաց կերեւի թէ խանութպանը ունի անվայել սովորութիւն ըրած են իրենց վաճառատունը Մինասեան Ամերիկեան վաճառատան ճիւղը կոչել յաճախորդ չահելու նպատակաւ, երբ չգիտցողներու կողմանէ իրենց հարցուի Ամերիկայի վաճառատան ուր լինելը : Վասն որոյ առ ի զգուշութիւն Ս. Մ. Մինասեան և ընկերք սլառիւ կը համարին ծանուցանել արգոյ հասարակութեան թէ Ամերիկեան վաճառատունը, որ հաստատուած է 1852 ին, բարձր չէնք մի է եւ կը գտնուի ի Ղալաթիա Բէրլէմսէ Փաղարի մօտ Եէնի ճամի կոչուած մզկիթի դռներէն միոյն կից, եւ թէ յայլուր ի Ղալաթիա ի Բերա և կամ Պոլսոյ կողմը ճիւղ չունի :

ՄԱՁԻ ՆԵՐԿ

Լաւագոյն տեսակը կը ծախուի Ս. Մ. Մինասեան եւ ընկերաց Ամերիկեան վաճառատան :

աւտան մէջ ի Ղալաթիա Բէրլէմսէ Բաղարի մօտ Եէնի ճամիի դռան կից :

Վերոյիշեալ ներկի գործածութեան եւ զանազան շատ դիւրին, արդիւնքը վայրկեանական ու խիստ գոհացուցիչ եւ գոյնը մընայուն ու բոլորովին բնական է : Գնողները կը վկայեն թէ ուրիշ ներկերու անմաքութենէն ու ունեց իսկ գարշելի հոտէն ծանձրացած ըլլալով, սկսած են գործածել այս ներկը որով շատ գոհ եղած ու նեղութենէ ազատած են, ուստի ոչ մէկ ներկասոր պատուականութեանը կը հաւասարի : Ներկի կարօտութիւն ունեցողները թող հաճին փորձել : Կը ներկէ սեւ կամ չազականագոյն, մորթը չաղտոտուի ու վնասակար նիւթ չը պարունակեր :

1886 տարւոյ ՊԱՐԶ ՕՐԱՑՈՑՅՆ ԵՒ ԸՆԴԱՐՁԱԿ ՕՐԱՑՈՑՅՆ այժմէն պատրաստուելու վրայ լինելով, առեւտրական, արհեստական եւ ուրիշ ծանուցումներ այսօրուքնէ կ'ընդունուին :

Առաջնոյն համար, որ 40,000 օրինակ կը ծախուի, ծանուցմունք պէտք է զրկուին մինչեւ Յունիսի վերջն, եւ երկրորդին համար՝ որ 6000 օրինակ կը ծախուի, մինչեւ Յունիսի վերջը :

Դիմել առ Գարեգին Էֆ. Պաղտատլեան, հրատարակիչ այդ օրացուցից, Պոլիս, Չաքմաքճըլար, 13, Յակոբեան խան :

ՎԱՅՐԿԵՆԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՅՅԵՏՈՄՍԵՐՈՒ

Կը պատրաստուի ազնիւ քարտերու վրայ ամեն լեզուաւ գեղեցիկ գրերով, 100 հատը 40 ղուրուշ :

Դիմել առ Գարեգին Էֆ. Պաղտատլեան, Չաքմաքճըլար, Յակոբեան խան թիւ 13 :

Արտօնաւէր

Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՈՑ